ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

3 (72)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 3 (72), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ագլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Աննա Ժամակոչյան
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Վահրամ Հովյան
Տիգրան Ղանալանյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 3 (72), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի արտաքին քաղաքականությունը …. 4

Անուշավան Բարսեղյան
Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը …. 16

Զոնի Մելիքյան
Վրաստանի արտաքին քաղաքականությունը …. 27

Ռոման Կարապետյան
Իրանի արտաքին քաղաքականությունը 35

Հրայր Փաշայան
Արցախի Հանրապետությունը և քառօրյա պատերազմը 44

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մարտիրոսյան
Հայ-ադրբեջանական ապրիլյան պատերազմին ուղեկցող կիբեռհարձակումները 56

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Կարեն Վերանյան
«Տնտեսական ազատության ինդեքսը» 2012-2016թթ. 58

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խաչիկ Փափազյան
Եվրասիական տնտեսական միության շրջանակներում իրականացվող
արտաքին աուդիտի (վերահսկողության) գործընթացը 67

Տարածաշրջան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. ապրիլ

Հայկ Գաբրիելյան[*]

Թուրքիա-Ռուսաստան. *Տնտեսական* - Ապրիլին ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան ռուսաստանցիներին խորհուրդ տվեց զերծ մնալ Թուրքիա այցելելուց՝ կապված այդ երկրում տիրող լարված իրավիճակի հետ: Իսկ «Ռոստուրիզմը» հայտարարեց, որ ռուսաստանցի զբոսաշրջիկների համար Թուրքիան հաստատապես չի բացվի այս տարի: Ապրիլին Թուրքիայի Միջերկրածովյան ծովափի հյուրանոցների միության նախագահ Յուսուֆ Հաջիսուլեյմանը հայտարարեց, որ 2016թ. Թուրքիայի զբոսաշրջային սեկտորը նախնական տվյալներով կկորցնի 4-4.5 մլն զբոսաշրջիկ, և որ վնասը կարող է կազմել $10 մլրդ: Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջության նախարար Մահիր Ունալը հայտարարեց, որ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը լուրջ վնաս է պատճառել երկրի զբոսաշրջային ոլորտին՝ հայտարարելով, որ Թուրքիայի և Ռուսաստանի միջև կարող է սկսվել զինված դիմակայություն, ինչը նվազեցրել է օտար զբոսաշրջիկների հոսքը: Ունալը հույս է հայտնել, որ 2016թ. Ռուսաստանից Թուրքիա կայցելի 2.5 մլն զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա 4.5 մլն-ի փոխարեն՝ հավելելով, որ Թուրքիան ձգտելու է նրանց կորուստը փոխհատուցել Իրանից, Հնդկաստանից և Ուկրաինայից զբոսաշրջիկներ ներգրավելու հաշվին:

Ապրիլին հաղորդվեց, որ ռուսական «Գազպրոմ» և թուրքական մասնավոր գազային ընկերությունները (*Enerco Enerji, Avrasya gaz, Akfel gas, Bosphorus gas, Shell Turkey, Batı Hattı և Kibar Enerji*) լուծել են գազի մատակարարման գնագոյացման վերաբերյալ ծագած բոլոր հարցերը: 2015թ. ապրիլի վերջին «Գազպրոմը» նրանց տրամադրել էր 10.25%-անոց գազային զեղչ, սակայն հետագայում նրանց զրկել էր դրանից և կրճատել գազի մատակարարման

[*] Թուրքագետ:

ծավալները: Ապրիլի վերջերին Ռուսաստանը ժամանակավորապես արգելեց Թուրքիայից սմբուկի ներկրումը՝ ընդգծելով, որ վերջին շրջանում 4 անգամ վնասակար տարրեր են հայտնաբերվել դրանում և տասնյակ տոննաներով սմբուկ է վերադարձվել Թուրքիային: «Ռոսսելխոզնադզորը» հայտարարեց, որ անվտանգության երաշխավորման դեպքում պատրաստ է չեղյալ հայտարարել Թուրքիայից գյուղատնտեսական արտադրանքի ներկրման արգելքը: Դրանից հետո տվյալ հարցերի շուրջ բանակցելու նպատակով Մոսկվա ժամանեց Թուրքիայի գյուղատնտեսության նախարարության պատվիրակությունը, ինչը ռուս-թուրքական հարաբերությունների սրացումից հետո թուրքական պատվիրակության պաշտոնական առաջին այցն էր Ռուսաստան:

Ապրիլին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան չի հրաժարվի Աքքույուի ատոմակայանից, որը կառուցում է «Ռոսատոմը»: Վերջինիս ղեկավար Սերգեյ Կիրիենկոն հայտարարեց, որ կորպորացիան չի փոխել Աքքույուի ատոմակայանին առնչվող պլանները: Դրանից առաջ մի շարք լրատվամիջոցներ գրել էին, թե «Ռոսատոմը» կարող է վաճառել ատոմակայանի նախագծում իր բաժնեմասի գրեթե կեսը՝ 49%: Ապրիլին Զախարովան հերքեց, թե կա պետական պատվեր՝ թուրք գործարարներին ճնշելու համար, իսկ Ռուսաստանի տնտեսական զարգացման նախարար Ալեքսեյ Ուլյուկանն էլ հերքեց, թե իրենք ձգտում են ընդլայնել Թուրքիայի դեմ տնտեսական պատժամիջոցների փաթեթը:

Քաղաքական - Ապրիլին Էրդողանը քանիցս հայտարարեց ռուս-թուրքական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին՝ հույս հայտնելով, որ կհաղթահարվեն առկա դժվարությունները, իսկ նրա մամլո քարտուղար Իբրահիմ Քալընը հայտարարեց, որ ռուս-թուրքական հարաբերությունները չափազանց կարևոր են, որպեսզի դրանք կարելի լինի զոհաբերել: Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն նշեց, որ եթե Ռուսաստանը ցանկանա վերականգնել հարաբերությունները, ապա Թուրքիան պատրաստ է դրան: Չավուշօղլուի խոսքերով՝ վերջին շրջանում երկու երկրների հարաբերություններում կա որոշակի ջերմացում, սակայն ՌԴ ԱԳՆ-ն հերքեց դա՝ ընդգծելով, որ ներկա ճգնաժամի պատասխանատուն Թուրքիան է, և որ թուրքական իշխանությունների հակառուսական դիրքորոշումը թույլ չի տալիս տեսանելի ապագայում ակնկալել երկկողմ հարաբերությունների կարգավորում:

Ապրիլին ՄԱԿ-ում Ռուսաստանի մշտական ներկայացուցիչ Վիտալի Չուրկինը Թուրքիային մեղադրեց միջսիրիական բանակցություններին Սիրիայի քրդերի մասնակցությունը խոչընդոտելու, ԻՊ-ին զենք մատակարարելու, Իրաքից և Սիրիայից անտիկ իրերի մաքսանենգությամբ զբաղվելու համար և կոչ արեց ամբողջությամբ փակել թուրք-սիրիական սահմանը: Թուրքական կողմն անհիմն համարեց այդ մեղադրանքը և Ռուսաստանին մեղադրեց զրպարտանքի մեջ: Զախարովան փախստականների հանդեպ Թուրքիայի կիրառած մեթոդները որակեց որպես «վայրի»՝ ընդգծելով, որ Սիրիայի խաղաղ քաղաքացիները դառնում են թուրք սահմանապահների կրակի զոհը, «21-րդ դարի ստրկավաճառություն» որակեց ԵՄ-Թուրքիա միգրացիոն գործարքի շրջանակներում փախստականների փոխանակումը և Թուրքիային մեղադրեց Սիրիայի հետ սահմանին իր գործողություններով «կրակի վրա յուղ լցնելու» համար (Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովն առաջարկեց թուրք-սիրիական սահման հրավիրել դիտորդների):

Ապրիլին Թուրքիայում արգելափակվեց ռուսական *Sputnik* լրատվական գործակալության թուրքական մասնաճյուղի կայքը, ապա արգելվեց նրա խմբագիր Թուրալ Քերիմովի մուտքը Թուրքիա: Դրա հետ կապված՝ Զախարովան հայտարարեց, որ Քերիմովի մուտքն արգելելը ԶԼՄ ճնշմանը միտված Անկարայի քաղաքականության ցուցիչ է, և Մոսկվան մտահոգ է Թուրքիայում ԶԼՄ ազատության դեգրադացվող իրավիճակից: Ապրիլի կեսին Թուրքիան վիզային ռեժիմ սահմանեց ծառայողական անձնագրով ժամանող Ռուսաստանի քաղաքացիների համար, ինչին Ռուսաստանը տվեց նույնատիպ պատասխան:

Ապրիլին Թուրքիայի քաղաքացի, զինյալ Ալփարսլան Չելիքը, որն ավելի վաղ հայտարարել էր, թե ինքն է սպանել 2015թ. նոյեմբերի 24-ին թուրքական օդուժի խոցած ռուսական «Սու-24» ինքնաթիռի օդաչու Օլեգ Պեշկովին, հետ կանգնեց իր այդ խոսքերից՝ հայտարարելով, թե միջադեպի ժամանակ դիմել է իր շուրջը գտնված զինյալներին՝ խնդրելով դադարեցնել կրակը: Չելիքի փաստաբան Մուրաթ Ուսթունդաղը հայտարարեց, որ թուրքական օրենքներն արգելում են դատական նպատակով երկրի քաղաքացու հանձնումը այլ երկրի, և եթե թուրքական դատարանը գտնի, որ Չելիքը մեղավոր է, ապա կպատժի նրան: ՌԴ ԱԳՆ-ն հույս հայտնեց, որ Չելիքը խստագույն պատժի կարժանանա, իսկ Ռուսաստանի նախագահի մամլո քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարեց, թե Կրեմլն ակնդետ հետևում է թուրքական քննչական մարմինների

գործողություններին, և դեռ հայտնի չէ, թե իրավական տեսանկյունից որքանով է հնարավոր Չելիքի արտահանձնումը: Ապրիլին Չելիքը նամակ հղեց ՌԴ ԱԳՆ՝ ռուսական իշխանություններին երկխոսության կոչ անելով: Մեկնաբանելով սոցցանցերում տարածված այդ տեղեկատվությունը՝ Զախարովան հայտարարեց, թե դա առիթ չէ պաշտոնական Մոսկվայի արձագանքի համար, որ իրենք կարձագանքեն միայն թուրքական կողմի վերջնական հայտարարությանը:

Ապրիլին կողմերն աչքի ընկան ԼՂ-ի վերաբերյալ մի շարք հայտարարություններով: Չավուշօղլուն հերքեց Ղարաբաղյան հակամարտության գոտում իրավիճակի սրացման հարցում Թուրքիայի դերի մասին ռուսական կողմի հայտարարությունները. «Մենք ցանկանում ենք հակամարտության խաղաղ կարգավորում, սակայն ամեն դեպքում մենք մշտապես կլինենք եղբայրական Ադրբեջանի կողքին»: Դրանից առաջ Ռուսաստանի Դաշնության խորհրդի՝ միջազգային հարցերով հանձնաժողովի ղեկավար Կոնստանտին Կոսաչովը հայտարարել էր, որ Թուրքիան ԼՂ հարցում իր միակողմանի դիրքորոշմամբ «կրակի վրա յուղ է լցնում», հակամարտող կողմերից մեկին խթանում է դրա շարունակման համար, իսկ ահա Սերգեյ Լավրովը հայտարարեց, որ իրենք որևէ արտաքին ուժի և որևէ արտաքին խաղացողի չեն մեղադրում ԼՂ-ում լարվածության ներկայիս բռնկումը հրահրելու համար: Չնայած Լավրովի այս հայտարարությանը՝ Էրդողանը Ռուսաստանին անվանեց «Ղարաբաղյան հակամարտության կողմ». «Ռուսաստանն ասում է, թե Թուրքիան (Ղարաբաղյան) հակամարտության կողմ է, մինչդեռ իրականում հակամարտության կողմը Ռուսաստանն է, որը հակամարտող կողմ է եղել Վրաստանում, Ուկրաինայում, իսկ ներկայումս նաև Սիրիայում հակամարտող կողմ է»: Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդևը հայտարարեց, որ Ղարաբաղյան հակամարտությունում թուրքական գործոնն առկա է թեկուզ նրա համար, որ Թուրքիան հայտնել է իր դիրքորոշումը (Էրդողանը հայտարարել էր, թե Ղարաբաղը «կլինի» ադրբեջանական): Ավելի ուշ Լավրովը ԼՂ հակամարտության մասին Թուրքիայի ղեկավարության հայտարարությունները որակեց որպես անընդունելի. «Դրանք ոչ թե դեպի խաղաղություն, այլ պատերազմ տանող կոչեր են»:

Հարկ է նշել, որ թուրք-ադրբեջանական տանդեմը վերջին շրջանում որդեգրել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներին հնարավորինս վարկաբեկելու, ԼՂ խնդիրը լուծելու հարցում նրա «անզորությունն» ի ցույց

դնելու, ԵԱՀԿ Մինսկի խմբի ողջ կազմով բանակցություններ անցկացնելու անհրաժեշտության գիծ, ինչը պետք է նախադրյալներ ստեղծի ԼՂ բանակցային գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ Թուրքիայի ակտիվ ներգրավվածության համար: ԼՂ հակամարտության գոտու քառօրյա պատերազմը ծառայում էր նաև այդ նպատակին, ինչպես նաև Թուրքիայի կողմից Ռուսաստանի հետ շփման հարթակ ստեղծելուն (որ Ռուսաստանը ԼՂ հարցում զգա Թուրքիայի հետ երկխոսելու կարիք):

Թուրքիա-ԱՄՆ - Ապրիլին Էրդողանը Մերիլենդ նահանգում մասնակցեց ԱՄՆ ամենամեծ մզկիթի բացմանը, որի կառուցումը ֆինանսավորել է թուրքական կողմը: Ամերիկյան այցի շրջանակներում Էրդողանին հաջողվեց ոչ պաշտոնական հանդիպում ունենալ Բարաք Օբամայի հետ, որը չմասնակցեց Մերիլենդի մզկիթի բացմանը: Դրանից առաջ Սպիտակ տունը հայտնել էր, որ Օբամայի գրաֆիկում տեղ նախատեսված չէ Էրդողանի հետ պաշտոնական հանդիպման համար, ինչը որակվեց Վաշինգտոնի և Անկարայի հարաբերությունների սառեցման նշան: Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիայի և ԱՄՆ դիրքորոշումները մոտենում են Սիրիայի քրդերի ուժերի հարցում, որ Թուրքիան կշարունակի զարգացնել ԱՄՆ-ի հետ հարաբերությունները՝ հենված ընդհանուր շահերի վրա՝ չնայած մի շարք տարաձայնություններին: Օբաման հայտարարեց, որ միջազգային և տարածաշրջանային հարցերում Թուրքիայի հետ համագործակցությունը ԱՄՆ-ի համար մնում է ծայրահեղ կարևոր: Ապա նա մտահոգություն հայտնեց ԶԼՄ-ի հանդեպ թուրքական իշխանությունների մոտեցմամբ, ինչի կապակցությամբ Էրդողանը հայտարարեց, որ Օբամայի հետ չի քննարկել Թուրքիայում խոսքի ազատության և ԶԼՄ-ում իրադրության թեման, և վշտացած է, որ Օբաման իր հետևից արել է նման հայտարարություններ:

Ապրիլին Չավուշօղլուն հայտարարեց, որ Թուրքիան և ԱՄՆ-ը պայմանավորվել են թուրք-սիրիական սահմանին ամերիկյան *HIMARS (High Mobility Artillery Rocket System)* համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր տեղակայելու շուրջ: Չավուշօղլուն մանրամասնել է, որ այդ համակարգերը տեղակայվելու են թուրք-սիրիական սահմանի 98 կիլոմետրանոց հատվածում (Աֆրին-Ջերաբլուս հատված), որի հակառակ կողմը վերահսկում է ԻՊ-ը (ապրիլին նաև հաղորդվեց, որ ԱՄՆ-ը ԻՊ-ի դեմ պայքարի համար Թուրքիայի հարավ-արևելքում տեղակայելու է EA-6B *Prowler* տախտա-

կամածային ինքնաթիռներ)։ Խոսելով Սիրիայի քրդերի ուժերի (*PYD-YPG*) հարցում ԱՄՆ դիրքորոշման մասին՝ Չավուշօղլուն հայտարարեց, որ այն փոփոխության չի ենթարկվել, սակայն ԱՄՆ-ը սկսել է հաշվի առնել այդ հարցում իրենց մտահոգությունները:

Ապրիլի սկզբին Թուրքիայի ԱԳՆ-ն հայտնեց, որ ԱՄՆ գլխավորած դաշինքի ավիացիան ոչնչացրել է Իրաքի Մոսուլ քաղաքում գտնվող Թուրքիայի հյուպատոսությունն ու այնտեղ գտնված զինյալներին։ Ընդ որում՝ հայտարարության մեջ նշված էր, որ ավիահարվածից առաջ խորհրդակցություններ են անցկացվել Անկարայի հետ, որը տվել է ԻՊ-ի կողմից զավթված իր հյուպատոսությունը ոչնչացնելու համաձայնություն։ Ի դեպ, ավելի վաղ կարծիքներ էին հնչել, թե Թուրքիան Մոսուլից հյուսիս զորք է տեղակայել, որպեսզի հետագայում այն մասնակցի Մոսուլի ազատագրմանը և վերացնի ԻՊ-ի և Թուրքիայի միջև սերտ կապերի մասին վկայող փաստաթղթերը։ Ապրիլին Թուրքիայի ԱԳՆ-ն «ավանդաբար» կտրականապես դատապարտեց Օբամայի «ապրիլքսանչորսյան» ուղերձը՝ չնայած դրանում բացակայել է «ցեղասպանություն» եզրույթը՝ դա որակելով որպես «միակողմանի» վերաբերմունք»։

Թուրքիա-ԵՄ - Ապրիլին մեկնարկեց ԵՄ-ի և Թուրքիայի միջև ապօրինի ներգաղթյալներին և սիրիացի փախստականներին փոխանակելու գործընթացը։ Խոսքն ապօրինի ներգաղթյալների մասին է, որոնք պաշտպանություն չեն խնդրել ԵՄ-ում կամ էլ ապաստան տալու մասին հայտերը ճանաչվել են անընդունելի։ Միաժամանակ Թուրքիայից ԵՄ կտեղափոխեն նույն թվով սիրիացիներ։ Ապօրինի ներգաղթյալների և օրինական փախստականների փոխանակումն իրականացվում է «մեկը մեկի դիմաց» սկզբունքով։ Ապրիլին Հունաստանը Լեսբոս կղզուց Թուրքիա ուղարկեց փախստականների առաջին խմբաքանակը՝ 135 մարդ, Դավութօղլուն կոչ արեց Հունաստանից հետ վերադարձողներին ընդունել ինչպես «սեփական զավակների»։

Ապրիլին Էրդողանը ԵՄ-ին մեղադրեց Թուրքիայի հետ միգրացիոն գործարքով խոստումները չկատարելու համար և սպառնաց, որ ինքը նույնպես չի կատարի դրանք։ Դավութօղլուն հանդես եկավ նման սպառնալիքով, եթե ԵՄ-ը չկատարի Թուրքիայի քաղաքացիներին ոչ վիզային ռեժիմ տրամադրելու մասով իր պարտավորությունները (Դավութօղլուի խոսքերով՝ ԵՄ-ի հետ ոչ վիզային ռեժիմ ունենալը կենսական կարևորություն ունի Թուրքիայի համար)։ Ապրիլին Եվրոպական հանձնաժողովը (ԵՀ) Թուրքիային հատկացրեց

110 մլն եվրո՝ ներգաղթը սահմանափակելու համար, որով և այս տարի Անկարային հատկացրած գումարի չափը հասավ 187 մլն եվրոյի՝ խոստացած 3 մլրդ եվրոյից: Ապրիլին Եվրոպական խորհրդի ղեկավար Դոնալդ Տուսկը հայտարարեց, որ ԵՄ-ն ամռանը Թուրքիային կհատկացնի 1 մլրդ եվրո: Տուսկը, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը և ԵՀ առաջին փոխնախագահ Ֆրանց Թիմերմանսը այցելեցին Գազիանթեփ նահանգ, ուր նրանց Դավութօղլուն ցույց տվեց Նիզիպի այսպես կոչված գովազդային ճամբարը: Մերկելը կոչ արեց Սիրիայում՝ թուրքական սահմանի մոտ, փախստականների համար ստեղծել անվտանգության գոտի:

Ապրիլին Էրդողանը Բաքվում անցկացված ՄԱԿ Քաղաքակրթությունների դաշինքի 7-րդ գլոբալ ֆորումում հայտարարեց, որ Թուրքիան 3 մլն փախստական է ընդունել Սիրիայից ու Իրաքից և նրանց վրա ծախսել է $10 մլրդ, իսկ ՀԿ-ների ծախսերը հաշվի առնելու դեպքում գումարի չափը կգերազանցի $20 մլրդ-ը: Ի դեպ, ՄԱԿ պաշտոնական ներկայացուցիչ Բետինա Լյուշերն ապրիլին հայտարարեց, որ Թուրքիայում գրանցված է Սիրիայից ժամանած 2.730.000 փախստական, որոնց գրեթե 90%-ը բնակվում է հատուկ ճամբարներից դուրս: Թուրքիան այժմ մտադիր է փախստականների համար կառուցել 3-ական տնակային քաղաք ու փախստականներին ընդունելու կենտրոն՝ նախատեսված 39.000 մարդու համար:

Ապրիլին Էրդողանը հայտարարեց, որ ԵՄ-ի կողմից Թուրքիայի քաղաքացիների համար վիզային ռեժիմի վերացումը, որը ենթադրաբար տեղի կունենա հունիսի վերջին, լավություն չէ ԵՄ-ի կողմից, քանի որ դեռ իր վարչապետ լինելու ժամանակ հաղորդվել էր, որ դա տեղի է ունենալու 2016թ. հոկտեմբերին, և չի կարելի խոշոր զիջում համարել այդ ժամկետը չորս ամսով տեղափոխելը: Էրդողանը նաև դատապարտեց ԵՄ այն պահանջները, որոնց համաձայն՝ Թուրքիան պետք է կոնկրետ նախագծեր ներկայացնի փախստականների համար՝ որպես պայման ֆինանսական օգնության դիմաց նրանց ընդունելու համար:

Ապրիլին Թուրքիայի փոխվարչապետ Նուման Քուրթուլմուշը մուսուլմանական երկրներին կոչ արեց ճանաչել Կոսովոն. «Թեև Կոսովոն գտնվում է Եվրոպայում, այդ երկիրը իսլամական մշակույթի առավել կարևոր բաղադրիչներից մեկն է: Կոսովոն Եվրոպային կծանոթացնի իսլամի հարուստ ժառանգության մասին: Կոսովոյի ճանաչումը կուժեղացնի իսլամական աշխարհի հզորությունը»:

Ապրիլին Եվրոպական խորհրդարանը զեկույց ընդունեց Թուրքիայում մարդու իրավունքների վերաբերյալ, որում մտահոգություն հայտնեց դատական համակարգի, խոսքի ազատության ու մարդու իրավունքների ոլորտների շուրջ: Թուրքիայի՝ ԵՄ հարցերով նախարար Վոլքան Բոզքրը հայտարարեց, որ Եվրոպական խորհրդարանի նոր «ոչ էական» զեկույցն արժանացել է նախորդ տարվա նրա զեկույցի ճակատագրին, որը հետ վերադարձվեց Հայոց ցեղասպանության հիշատակման համար: Էրդողանը նույնպես դատապարտեց այդ զեկույցը՝ այն որակելով որպես «հայամետ» և «ոչինչ չպարտավորեցնող»:

Թուրքիա-Իրան - Ապրիլին Իրանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Մահմուդ Վաեզին և Թուրքիայի էկոնոմիկայի նախարար Մուսթաֆա Էլիթաշը Թեհրանում քննարկեցին տնտեսական հարաբերությունների ընդլայնման հարցը և լիովին իրատեսական համարեցին, որ երկու երկրները կարող են տարեկան ապրանքաշրջանառության ծավալը հասցնել մինչև $30 մլրդ-ի: 2015թ. Իրանի և Թուրքիայի միջև երկկողմ ապրանքաշրջանառության ծավալը կազմել է մոտ $10 մլրդ: Այդ ցուցանիշն անշեղորեն նվազում է 2012թ. հետո, երբ այն հասել էր $22 մլրդ-ի: Ապրիլին Թուրքիա այցելեց Իրանի նախագահ Հասան Ռոուհանին՝ մասնակցելու համար ԻՀԿ 13-րդ գագաթաժողովին, որի ամփոփիչ փաստաթղթում տեղ են գտել Իրանի հասցեին արված ծանր մեղադրանքներ: Նա մասնավորապես մեղադրվել է Եմենի, Բահրեյնի, Սոմալիի և Սիրիայի ներքին գործերին միջամտելու համար, և պահանջվել է վերջ դնել այդ ամենին:

Ապրիլի սկզբներին Իրանի Ռամսար քաղաքում տեղի ունեցավ Թուրքիայի, Իրանի և Ադրբեջանի արտգործնախարարների չորրորդ եռակողմ հանդիպումը, որում քննարկվեցին տարածաշրջանային համագործակցության, միջազգային ահաբեկչության դեմ պայքարի, բեռների տարանցման, ինչպես նաև քաղաքական ոլորտում համագործակցության զարգացման հարցերը: Ի դեպ, ապրիլին Թուրքիայում ուժի մեջ մտավ կառավարության որոշումը, որով սառեցվեցին շիա ապստամբներին աջակցած Եմենի նախկին նախագահ Ալի Աբդալլահ Սալեհի բանկային հաշիվները, ֆինանսական ակտիվները և գույքը:

Թուրքիա – ԻՊ - Ապրիլին Դավութօղլուն հայտարարեց, որ ԻՊ-ը հունվարի 18-ից սկսած 46 հրթիռ է արձակել թուրքական Քիլիս սահմանային նահանգի տարածքի ուղղությամբ, ինչի հետևանքով նահանգում զոհվել է 17

մարդ, որոնցից 10-ը Թուրքիայի քաղաքացի է: Դրա հետ կապված՝ Քիլիս նահանգում ապրիլին կազմակերպվեց բողոքի զանգվածային ակցիա, որի մի քանի հարյուր մասնակիցներն իշխանություններից պահանջեցին ապահովել իրենց անվտանգությունը: Ապրիլին Թուրքիայի զինված ուժերը մեծացրին Սիրիայի հետ սահմանի երկայնքով տեղակայված տանկերի և հաուբիցների թիվը, տեղակայեցին հրթիռային համալիրներ:

Թուրքիա-Իսրայել, Կատար - Ապրիլին Թուրքիայի նախագահի մամլո խոսնակ Իբրահիմ Քալընը հայտարարեց, որ Թուրքիան և Իսրայելը դեռ չեն հասել հարաբերությունների կարգավորման վերջնական պայմանավորվածությանը. «Իսրայելից ստացվել է ներողություն («Մավի Մարմարայի» միջադեպի համար), կա փոխհատուցում վճարելու մասին պայմանավորվածություն: Սակայն երրորդ թեման Գազայի հատվածի բնակչության համար կենսապայմանների վերականգնումն է, այդ հարցում մենք համառ ենք, անընդունելի է այն, թե ինչպես է այնտեղ ապրում երկու միլիոն մարդ: Անհրաժեշտ է վերացնել Պաղեստինի շրջափակումը, դադարեցնել 49-ամյա օկուպացիան»: Իսրայելի էներգետիկայի նախարար Յուվալ Շտեյնիցը, որը, ԶԼՄ տվյալներով, ապրիլին գաղտնի հանդիպում է ունեցել Էրդողանի հետ, հայտարարեց, որ Գազայի հատվածում նավահանգստի կառուցման թեմայով Թուրքիայի հետ համաձայնագիրը պատրաստ է 90%-ով, ինչը կնպաստի Իսրայելի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը:

Ապրիլին Էրդողանը հայտարարեց, որ Իսրայելը գիտակցել է Թուրքիայի հանդեպ գործած սխալը. «Մենք երեք նախապայման ենք ներկայացրել, որոնցից առաջինն արդեն իսկ կատարված է: Մնացած երկու նախապայմանները դեռ կատարված չեն: Այժմ փոխհատուցման հարցում կա առաջընթաց: Սակայն Գազայի հատվածում կան լուրջ խնդիրներ: Գազայի ամենակարևոր խնդիրը էլեկտրականությունն է: Մենք առաջարկել ենք գերմանացիների հետ համատեղ կառուցել էլեկտրակայան»:

Չավուշօղլուն Ստամբուլում տեղի ունեցած ԻՀԿ նիստում հայտարարեց պաղեստինյան անկախ պետություն ստեղծելու անհրաժեշտության մասին:

Թուրքիա – Հարավային Կովկաս - Ապրիլին Թուրքիան և Ադրբեջանն ամենատարբեր մակարդակով բազմիցս քննարկեցին ԼՂ հարցը: Ապրիլի սկզբին Էրդողանը հեռախոսազրույց ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ և ցավակցություն հայտնեց ԼՂ հակամարտության գոտում ադրբե-

ջանցի զինծառայողների սպանվելու կապակցությամբ: Թուրքիայի և Ադրբեջանի պաշտպանության նախարարներ Իսմեթ Յըլմազը և Զաքիր Հասանովը նույնպես քննարկեցին իրավիճակը ԼՂ հակամարտության գոտում: Չավուշօղլուն և Մամեդյարովը Ռամսարում քննարկեցին ԼՂ հարցը: Չավուշօղլուն հայտարարեց, որ Ադրբեջանին օգնելու հարցում Թուրքիայի պատրաստ լինելը չի նշանակում, թե Անկարան Բաքվին դրդում է պատերազմի: Չավուշօղլուն քննադատեց ԵԱՀԿ Մինսկի խմբին. «Ինչո՞վ են զբաղվում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Եթե ԱՄՆ-ը, Ռուսաստանն ու Ֆրանսիան ցանկանան, ապա ԼՂ հակամարտությունը կկարգավորի 1 շաբաթվա ընթացքում»:

Ապրիլին Չավուշօղլուն կոչ արեց ԻՀԿ շրջանակներում ստեղծել արտգործնախարարների մակարդակով Ղարաբաղի հարցով շփման խումբ: ԻՀԿ 13-րդ գագաթաժողովին մասնակցելու համար ապրիլին Ստամբուլ ժամանեց Իլհամ Ալիևը, որը հանդիպեց Էրդողանի հետ և քննարկեց նաև ԼՂ հակամարտության գոտու վերջին զարգացումները: Ալիևը շնորհակալություն հայտնեց ԻՀԿ-ին՝ ԼՂ հակամարտության գծով շփման խումբ ստեղծելու որոշման համար:

Ապրիլին Դավութօղլուն հայտարարեց, որ Թուրքիան ուշադիր հետևում է ԼՂ շփման գծում իրադարձությունների զարգացմանը. «Թուրքիան Ադրբեջանի դեմ ուղղված ցանկացած սպառնալիք ընկալում է որպես անձնական սպառնալիք: Դժբախտաբար, չնայած Թուրքիան ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ է, մյուս համանախագահող երկրները, ինչպիսին է Ռուսաստանը, հանդես են գալիս Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն Անկարայի մասնակցության դեմ: ԵԱՀԿ Մինսկի խմբի մեջ մտնող երկրները պետք է ավելի ակտիվորեն մասնակցեն Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը»:

Դավութօղլուն ԻՀԿ 13-րդ գագաթաժողովում հայտարարեց. «Պաղեստինն օկուպացիայից ազատելու խնդիրն իսլամական աշխարհի հիմնական խնդիրներից մեկն է: Վերջին օրերին արդիականացած Ղարաբաղի ու Ղրիմի հարցերում մենք պետք է ցուցաբերենք միասնական դիրքորոշում»: ԻՀԿ գագաթաժողովից հետո Էրդողանը հայտարարեց. «ԵԱՀԿ Մինսկի խումբը մատնված է անգործության: Ես չեմ հասկանում, թե 25 տարում ինչու չեն կարողանում լուծել այդ խնդիրը»:

Դավութօղլուն Ստրասբուրգում, ԵԽԽՎ նստաշրջանում նույնպես անդրադարձավ ԼՂ հակամարտության կարգավորմանը. «ԵԱՀԿ Մինսկի խումբը

պետք է ներդնի առավելագույն ջանքեր՝ ԼՂ հակամարտությունը կարգավորելու համար: Թուրքիան՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, հանդես է գալիս ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման օգտին: ԼՂ շփման գծի վերջին դեպքերը ևս մեկ անգամ ցույց տվեցին, որ ԼՂ հակամարտության ստատուս քվոն անընդունելի է: Հրադադարի ռեժիմի խախտումը կարող է ազդել Նախիջևանի վրա, ինչն անընդունելի է»: Դավութօղլուն Նախիջևանի մասին հիշատակմամբ ակնարկում էր, որ խնդիրը կարող է ազդել նաև այդ երկրամասով մեծապես հետաքրքրված Թուրքիայի վրա:

Ապրիլի վերջերին Էրդողանը ժամանեց Բաքու, և ԶԼՄ ուշադրությունից չվրիպեց այն, որ այս անգամ Էրդողանը որևէ հայտարարություն չարեց ԼՂ-ի վերաբերյալ՝ չնայած երկկողմ հանդիպում էր ունեցել Ալիևի հետ: Սակայն Ադրբեջանը լքելուց հետո Էրդողանը հայտարարեց. «Հայաստանը կրակի հետ է խաղում: Դիմակայությունն ավելի ուժեղ է դարձնում Ադրբեջանին և Իլհամ Ալիևին»: Էրդողանը հիշատակեց նաև Թուրքիայում ապրող հայերի մասին. «Թուրքիայում բնակվում է մինչև 100.000 հայ, որոնցից 50.000-ը Թուրքիայի քաղաքացի չէ: Մենք հանդուրժողական վերաբերմունք ենք ցուցաբերում մշտական բնակության թույլտվություն չունեցողների հանդեպ: Մենք ցուցադրում ենք մեր բարի կամքը»:

Ապրիլին Էրդողանը վավերացրեց էներգետիկ ոլորտում Վրաստանի հետ համագործակցության համաձայնագիրը, որը ստորագրվել է 2015թ. ապրիլի 9-ին: 2015թ. Վրաստանից Թուրքիա էլեկտրաէներգիայի արտահանումը կազմել է մոտ 420 մլն կվտ/ժամ: Ադրբեջանի էներգետիկայի նախարար Նաթիգ Ալիևը հայտարարեց, որ «Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա» էներգետիկ կամուրջը մեծ հեռանկարներ է բացում էլեկտրաէներգիայի արտահանման տեսանկյունից:

Ապրիլին Թբիլիսիի և Ստամբուլի քաղաքապետեր Դավիթ Նարմանիան և Քադիր Թոփբաշը Թուրքիայում հուշագիր ստորագրեցին, որով Վրաստանի մայրաքաղաքն ու Թուրքիայի խոշորագույն քաղաքը դարձան «եղբայրական քաղաքներ»: Հուշագիրը նախատեսում է ներդրումների, մշակույթի և զբոսաշրջային ոլորտներում քաղաքների միջև համագործակցություն:

Ապրիլին Չավուշօղլուն Ստրասբուրգում հայտարարեց, որ Վրաստանը կարող է ՆԱՏՕ-ին անդամակցել՝ առանց անցնելու դաշինքին անդամակցելու գործողությունների ծրագրի (*MAP*). «Տեխնիկապես դա լիովին իրագործելի է:

Ես այդ հարցը կբարձրացնեմ մայիսին Բրյուսելում կայանալիք ՆԱՏՕ արտգործնախարարների խորհրդի նիստում: Մենք լիովին աջակցում ենք ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությանը, և քանիցս հայտարարել ենք այդ մասին՝ նաև երկու տարի առաջ Ուելսում դաշինքի գագաթաժողովի ժամանակ: Վարշավայի առաջիկա գագաթաժողովը պետք է դառնա ՆԱՏՕ ընդլայնման գագաթաժողով: Իհարկե, Թուրքիան որևէ երաշխիք չի կարող տալ այդ հարցում, բայց մենք կարծում ենք, որ Վրաստանն արժանի է ՆԱՏՕ անդամ լինել, քանի որ բավարարում է բոլոր պահանջներին»: Սա տեղավորվում է վերջին շրջանում Ռուսաստանի դեմ Թուրքիայի քայլերի շրջանակներում:

Ապրիլին թուրքական իշխանամետ «Սաբահ» թերթը հայտնեց, թե Թուրքիայի և Վրաստանի իշխանությունները համաձայնության են եկել, որով վրացական կողմը սահմանային մոտ 6 հեկտար վիճելի հողատարածք է հանձնել Թուրքիային: Խոսքն Արդահանի նահանգի մաս կազմած տարածքի մասին է, որը 1970-ականներին անցել է ԽՍՀՄ մաս կազմած Վրաստանին: Դա տեղի էր ունեցել այն բանից հետո, ինչ այդ շրջանով անցնող սահմանային ոչ մեծ Ջակիսցկալի գետը փոխել է իր հունը: Այժմ բանակցությունների արդյունքում կողմերը որոշել են սահմանային գետը վերադարձնել նախկին հուն և այդպիսով Թուրքիային է հանձնվել 15 ֆուտբոլային դաշտի չափ տարածք: Ընդգծվում է, որ խոսքը բարեբեր հողատարածքի մասին է: Վրաստանի ԱԳՆ-ն, սակայն, հերքեց այդ տեղեկատվությունը:

Ապրիլին Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Բերաթ Ալբայրաքը (Էրդողանի փեսան է) հայտարարեց, թե Մեծամորի ատոմակայանը տարածաշրջանի համար «իրական սպառնալիք» է. «Մեծամորի ատոմակայանը ենթակա չէ վերակառուցման, քանի որ կառուցվել է ավելի քան 40 տարի առաջ: Այն գտնվում է մեր սահմանից 10-20 կիլոմետր հեռավորության վրա և լուրջ ռիսկեր ու մտահոգություններ է առաջացնում: Անհրաժեշտ է փակել այն»: Թուրքիան ավելի վաղ նույնպես քանիցս բարձրացրել է Մեծամորի ատոմակայանի փակման հարցը:

ԱԴՐԲԵՋԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. ապրիլ

Անուշավան Բարսեղյան*

2016թ. ապրիլին ԼՂՀ-ի նկատմամբ ադրբեջանական ագրեսիան բխում էր Բաքվի կողմից տարիներ շարունակ իրականացվող ապակառուցողական և ռազմատենչ քաղաքականության ընդհանուր տրամաբանությունից և բացի ռազմական խնդիրներից՝ հետապնդում էր նաև մի շարք քաղաքական նպատակներ: Պահի ընտրությունը պայմանավորված էր ինչպես պետական եկամուտների կտրուկ նվազման և տնտեսական խորացող ճգնաժամի հետևանքով ուժերի հավասարակշռությունն իր օգտին փոխելու հռչակված քաղաքականության շարունակման անհեռանկարայնությամբ, այնպես էլ տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումներով և Ադրբեջանի արտաքին հարաբերություններում նկատվող միտումներով:

Ադրբեջանի արտաքին հարաբերությունների ապրիլ ամսվա իրավիճակային տեսությունը կներկայացնենք քառօրյա պատերազմի համատեքստում՝ հիմնական ուշադրությունը դարձնելով տարածաշրջանային երկրների և ուժային կենտրոնների պաշտոնական և հանրային արձագանքներին:

Ադրբեջան-Թուրքիա - Թուրքիան, թերևս, միակ պետությունն էր, որը բացահայտ զորակցություն հայտնեց Ադրբեջանին և ողջունեց նրա ագրեսիվ գործողությունները:

Թուրքիայում ներկա և նախկին պաշտոնյաների, քաղաքական և հասարակական գործիչների շրջանում կարծես մրցույթ էր հայտարարված, թե ով ավելի խրոխտ կեցվածք կընդունի և ով ավելի բարձրագոչ բառերով կարտահայտի իր զորակցությունը եղբայրական Ադրբեջանին: Այդ ցանկում իրենց «պատվավոր տեղը» զբաղեցրին Թուրքիայի նախագահ Ռ.Էրդողանը, վարչապետ Ա.Դավութօղլուն, նախկին նախագահ Ա.Գյուլը, փոխվարչապետ Թ.Թյուրքեշը, Թուրքիայի տրանսպորտի, նավագնացության և հաղորդակցու-

* «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

թյան նախարար Բ.Յըլդրըմը, Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) մամլո խոսնակ Օ.Չելիքը, Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Դ.Բահչելին, ԶՈՒ Գլխավոր շտաբի նախկին պետ Ի.Բաշբուղը, ԱԶԿ կառավարման խորհրդի նախկին անդամ Մ.Բաղլըն, նախկին պատգամավորներ և նախարարներ:

ԼՂ հակամարտության գոտում իրավիճակի սրման կապակցությամբ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի Արտաքին կապերի հանձնաժողովը՝ ի դեմս Արդարություն և զարգացում, Ժողովրդահանրապետական (*CHP*) և Ազգայնական շարժում (*MHP*) կուսակցությունների պատգամավորների, հանդես եկավ Հայաստանին դատապարտող հայտարարությամբ՝ լիովին արտահայտելով ադրբեջանական պաշտոնական տեսակետները: Ադրբեջանական լրատվամիջոցները, խեղաթյուրելով իրականությունը, սա ներկայացրին որպես թուրքական խորհրդարանի երեք առաջատար կուսակցությունների ընդունած հայտարարություն այն դեպքում, երբ *MHP*-ից շատ պատգամավորներ (59-ը 40-ի դիմաց) ունեցող քրդամետ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության (*HDP*) անդամները չեն միացել հայտարարությանը: Ընդհանրապես, *HDP*-ի՝ Անկարայի պանթյուրքիստական դիրքորոշումից տարբերվող մոտեցումները սվիններով են ընդունվում Թուրքիայում: Թուրքական «լավագույն ավանդույթների» համաձայն՝ դատական հայց է ներկայացվել *HDP* համանախագահ Ս.Դեմիրթաշի դեմ, որը ռուսաստանյան այցի ժամանակ անդրադարձել է Ղարաբաղում տեղի ունեցող վերջին զարգացումներին և օգտագործել «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետություն» ձևակերպումը:

Թուրքիան, ամենաբարձր մակարդակով աջակցություն հայտնելով ադրբեջանական ագրեսիային, որոշակիորեն փոխեց հռետորաբանությունը ՌԴ ԱԳ նախարար Ս.Լավրովի և ԱՄՆ պետքարտուղար Ջ.Քերիի՝ «ԼՂ-ի շուրջ առճակատումը խթանող արտաքին դերակատարներին դատապարտող» համատեղ հայտարարությունից և շփման գծում կրակի դադարեցումից հետո: Ապրիլի 6-ին Թուրքիայի ԱԳ նախարար Մ.Չավուշօղլուն հայտարարեց, որ Թուրքիան չի ողջունում ռազմական բախումները (առաջվա պես դրանում մեղադրելով Հայաստանին), և չնայած «եղբայրական Ադրբեջանին անհրաժեշտ պահին օգնության հասնելու պատրաստակամությանը»՝ Անկարան հանդես է գալիս ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման օգտին: Մ.Չավուշօղլուն նաև «սև քարոզչություն» անվանեց իրանական մի շարք լրատվամի-

ջոցների հրապարակումներն այն մասին, որ Ռ.Էրդողանը պատերազմ է հրահրում ԼՂ հակամարտության գոտում: Պատասխան ուղերձն Իրանին հետևյալն էր. «Լեռնային Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին, և այս իրավիճակում Ադրբեջանին և Թուրքիային մեղադրելն անհամատեղելի է իսլամի հետ»:

Ի պաշտպանություն Ադրբեջանի՝ Թուրքիայի Ստամբուլ և Իգդիր քաղաքներում անցկացվեցին հանրահավաքներ և երթեր, որոնց ընթացքում ծայրահեղականներն այրեցին Հայաստանի դրոշը: Ոչ պաշտոնական մակարդակներով հնչեցին Թուրքիայի և Ադրբեջանի՝ մեկ պետության մեջ միավորվելու և Ադրբեջանում թուրքական ռազմական բազա տեղակայելու հայտարարություններ, որոնք համապատասխան արձագանք չգտան Ադրբեջանում:

Թուրքիայի նախաձեռնությամբ Իսլամական համագործակցության կազմակերպության (ԻՀԿ) արտգործնախարարների Ստամբուլում կայացած «Միասնականություն և համերաշխություն հանուն խաղաղության և արդարության» գագաթաժողովը հանդես եկավ ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից ընդունված սկզբունքներն անտեսող, միակողմանի և իրականության հետ ոչ մի աղերս չունեցող հայտարարությամբ, որում «դատապարտվում է Հայաստանի դիրքորոշումն Ադրբեջանի նկատմամբ»:

Գագաթաժողովի շրջանակներում հատկապես հետաքրքրական էր Ռ.Էրդողանի և Ի.Ալիևի հանդիպումը ՌԴ-ի նկատմամբ թշնամական դիրքորոշմամբ հայտնի «Ղրիմ-թաթարական ժողովրդի մեջլիս» հասարակական միավորման առաջնորդներ Ռ.Չուբարովի և Մ.Ջեմիլևի հետ: Հարկ է նշել, որ այս հանդիպումից մի քանի օր հետո ՌԴ արդարադատության նախարարությունն արգելեց նշված կազմակերպության գործունեությունը ՌԴ տարածքում:

Ադրբեջան-Ռուսաստան - Ռուսաստանի՝ Հվ.Կովկասում ազդեցության մեծացման ձգտումների, ռուս-թուրքական լարվածության և ընդհանուր տարածաշրջանային աշխարհաքաղաքական միտումների համատեքստում կարծես Ադրբեջանի դերակատարությունը Ռուսաստանի համար ավելի է արժևորվում: Լինելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներից մեկը և կողմերի վրա համեմատաբար առավել մեծ ազդեցություն ունեցող երկիր՝ Ռուսաստանը ստանձնեց Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով լայնածավալ պատերազմի վերսկսման հնարավորության վերացման միջնորդական առաքելությունը: Ռազմական գործողությունների ընթացքում Ադրբեջանի կողմից ռուսական արտադրության նորագույն հրթիռահրետանային զինատեսակնե-

րի կիրառումը ՌԴ-ի նկատմամբ սուր քննադատություններ առաջացրեց Հայաստանի պաշտոնական և հանրային մակարդակներում:

Ամսվա ընթացքում Բաքու ժամանեցին ՌԴ վարչապետ Դ.Մեդվեդևը (Երևանից) և ՌԴ ԱԳ նախարար Ս.Լավրովը:

Ռուսաստանի, Ադրբեջանի և Իրանի արտգործնախարարների եռակողմ հանդիպմանը մասնակցելու նպատակով Բաքու ժամանած ՌԴ ԱԳ նախարար Ս.Լավրովը Ի.Ալիևի հետ հանդիպման ընթացքում ընդգծել է տնտեսական կապերի, տրանսպորտային և էներգետիկ ոլորտներում համագործակցության զարգացման կարևորությունը: Վերջինս նշել է, որ Ռուսաստանը նախագահների, վարչապետների, ԱԳՆ-ի, ՊՆ-ի, ԶՈՒ գլխավոր շտաբերի պետերի մակարդակով ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ քայլերը ԼՂ հակամարտության գոտում կրակի դադարեցման նպատակով և այսուհետ ևս մյուս համանախագահների հետ միասին կզբաղվի հարցի քաղաքական կարգավորմամբ: Ս.Լավրովը շեշտել է ԵԱՀԿ և Կարմիր խաչի օգնությամբ վստահության մեխանիզմների և քաղաքական գործընթացի շարունակման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման կարևորությունը:

Ադրբեջան-Իրան - ԼՂ հակամարտության ողջ ընթացքում Իրանի վարած հավասարակշռված քաղաքականությունն անփոփոխ մնաց նաև ապրիլյան քառօրյա պատերազմի և դրան հաջորդած զարգացումների ընթացքում: Ռազմական բախումների օրերին Իրանի ԱԳ նախարար Ջ.Զարիֆը կոչ արեց Հայաստանին և Ադրբեջանին հակամարտությունը լուծել խաղաղ ճանապարհով՝ միաժամանակ առաջարկելով սեփական միջնորդությունը տարածաշրջանի խաղաղությունը վերականգնելու համար: Լարվածությունը թուլացնելու նպատակով Իրանի նախագահ Հ.Ռոուհանին հեռախոսազրույցներ է նախաձեռնել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հետ, իսկ ԱԳ նախարարն առաջիններից էր, որ գոհունակություն հայտնեց կրակի դադարեցման առնչությամբ:

Իրանի արտաքին քաղաքականության պատասխանատուների հնչեցրած մի շարք հայտարարություններից կարելի է առանձնացնել երկու ուշագրավ շեշտադրում, որոնք անմիջականորեն առնչվում են Ադրբեջանի հետ հարաբերություններին: Առաջին. չնայած այն հանգամանքին, որ քառօրյա պատերազմն առավել ընդգծեց ադրբեջանա-իսրայելական խոր ռազմական համագործակցությունը, ընդհուպ իսրայելական արտադրության ԱԹՍ-ներն Իսրայելի մասնագետների կողմից օգտագործելու հիմնավոր կասկածները, ԻԻՀ

ԱԳ նախարարն իր հայտարարության մեջ Ադրբեջանն անվանեց «մոտ բարեկամ», Հայաստանն՝ ուղղակի «հարևան»: Երկրորդ. ԻԻՀ ԱԳ խոսնակը կոչ արեց Հայաստանին և Ադրբեջանին թույլ չտալ «արտաքին խաղացողներին վտանգավոր ճգնաժամ ստեղծել տարածաշրջանում»: Եթե ավելացնենք նաև, որ միաժամանակ իրանական մամուլում հայտնվեցին ռազմական լարվածությունը խթանելու մեջ Թուրքիային մեղադրող հրապարակումներ, ապա պարզ է դառնում, թե ում էր վերաբերում իրանական ակնարկը:

Չնայած պաշտոնական Թեհրանի զուսպ և հավասարակշիռ դիրքորոշմանը, Իրանի հոգևորական որոշ շրջանակներում հնչեցին ակնհայտ ադրբեջանանպաստ և սադրիչ հայտարարություններ: Իրանի Արդեբիլի շրջանում ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խամենեիի ներկայացուցիչ Հ.Ամիլին[1] հայտարարեց, որ իրանցիները պատրաստ են կռվել Ղարաբաղի համար, ինչն, իր կարծիքով, «իսլամական աշխարհի մի մասն է և պետք է վերադարձվի Ադրբեջանին»: Հ.Ամիլին իր խոսքը հիմնավորեց ԻԻՀ հոգևոր առաջնորդի նախկինում հնչեցրած այն արտահայտությամբ, որ «Ղարաբաղը հանդիսանում է իսլամական աշխարհի մաս, և նրա համար զոհվածները համարվում են շեհիդներ»: Հակահայկական ելույթով հանդես եկավ նաև Աստարա քաղաքի իմամը՝ նշելով, որ «Ղարաբաղը պետք է վերադարձվի Ադրբեջանին»:

Իրանական լրատվամիջոցներում նույնպես անդրադարձ եղավ ԻԻՀ հոգևոր առաջնորդի վերոնշյալ խոսքերին: Ա.Խամենեիի խոսքերը համատեքստից դուրս ներկայացնելը գնահատվեց որպես Իրանի ադրբեջանցիներին Հայաստանի դեմ տրամադրելու նպատակով ադրբեջանական քարոզչության կողմից արված քայլ՝ պարզաբանելով, որ իրականում ԻԻՀ հոգևոր առաջնորդը «Ղարաբաղի մուսուլմանների նկատմամբ հայերի ճնշումները քննադատել է Խոջալուի դեպքերի հետ կապված ելույթի ժամանակ»: Ըստ *www.iran.ru* կայքի[2], «Ադրբեջանական և ղարաբաղյան բանակների շփման գծում լարվածության աճի ընթացքում Ադրբեջանն ակտիվորեն փորձում է օգտագործել պանթյուրքիստական անջատողական աղբյուրները հակահայկական տրամադրություններ քարոզելու համար: Իրանի մեջլիսի ադրբեջանցի մի շարք անդամներ կոչ են անում միջոցներ ձեռք առնել Հայաստանի դեմ»: Ինչպես

[1] Հատկանշական է, որ նույն Հ.Ամելին ուրբաթօրյա աղոթքներից մեկի ժամանակ խստորեն քննադատել էր Ադրբեջանի իշխանություններին Նարդարանի դեպքերի հետ կապված՝ հայտարարելով, որ Ադրբեջանը վահաբականների դեմ պայքարելու փոխարեն հետապնդում է շիաներին:

[2] http://www.iran.ru/news/politics/100545/Azerbaydzhan_ispolzuet_dlya_propagandy_imya_Verhovnogo_Lidera

նշում է ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ Վ.Ոսկանյանը, նախագահ Մ.Ահմադինեժադի ժամանակաշրջանից սկսած՝ Իրանում շիականության կողքին զգալի քարոզչական կարևորություն է ստանում նաև իրանական պետականության երկրորդ կարևոր հիմնասյունը՝ ազգայնականությունը:

Իրանի և Ադրբեջանի ԱԳ նախարարներն այս ամսվա ընթացքում հանդիպեցին երկու եռակողմ ձևաչափերով՝ Իրան-Ադրբեջան-Թուրքիա և Իրան-Ադրբեջան-Ռուսաստան:

Դեռևս չէին դադարեցվել ռազմական գործողությունները, երբ ԱՀ ԱԳ նախարարը մեկնեց Իրան՝ հանդիպելու իր թուրք և իրանցի գործընկերներին: Մինչ այդ կայացած երկկողմանի հանդիպման ընթացքում Ջ.Զարիֆը և Է.Մամեդյարովը քննարկել էին ԼՂ հակամարտությունը: Ջ.Զարիֆը կրկին ընդգծել է ներկա պայմաններում տարածաշրջանում նոր ճգնաժամ թույլ չտալու համար բոլոր ջանքերը ներդնելու, ռազմական բախումները դադարեցնելու և խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու անհրաժեշտությունը:

Իրանի Ռամսար քաղաքում կայացած չորրորդ եռակողմ հանդիպման ընթացքում ստորագրվել է համագործակցության մասին երկու փաստաթուղթ: Առաջինն ընդհանուր սկզբունքների մասին հռչակագիր է, որով կողմերն ընդգծում են եռակողմ համագործակցությունը, իսկ երկրորդը՝ հետագա երկու տարիների համար գործողությունների համատեղ պլան, որում նշված է, թե կողմերը որ ոլորտներում և ինչպես են համագործակցելու: Ըստ Ջ.Զարիֆի՝ այդ ոլորտներն են տարանցումը, էներգետիկան, զբոսաշրջությունը և մշակութային հարցերը: Կողմերը քննարկել են նաև տարածաշրջանի խաղաղության և անվտանգության մասին համաձայնագրի ընդունման հնարավորությունը, պայմանավորվածություն է ձեռք բերվել փոխարտգործնախարարների մասնակցությամբ ստեղծել գործադիր կոմիտե, որը կզբաղվի ընդունված որոշումների կատարման գործընթացով:

Ադրբեջանի և Իրանի տնտեսական կապերի զարգացման տեսանկյունից բավական հագեցած էր Իրանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Մ.Վաեզիի այցը Բաքու: Մինչ Ադրբեջան ժամանելը Մ.Վաեզին ԱՀ էկոնոմիկայի նախարար Շ.Մուսթաֆաևի[3] հետ ներկա է գտնվել Աստարաչայ գետի վրա կառուցվելիք կամրջի հիմնարկեքի հանդիսավոր արա-

[3] Մ.Վաեզին և Շ.Մուսթաֆաևը Իրանի և Ադրբեջանի միջև տնտեսական, առևտրային և հումանիտար համագործակցության միջպետական հանձնաժողովի համանախագահներն են:

րողությանը: Համատեղ ուժերով կառուցվելիք կամուրջը պետք է իրար միացնի Ադրբեջանի և Իրանի երկաթուղիները, որի համար անհրաժեշտ է ավարտել նաև Կազվին-Ռեշտ-Աստարա (գտնվում է Իրանի տարածքում) և Աստարա (Իրան) - Աստարա (ԱՀ) երկաթուղային հատվածների շինարարությունը[4]: Իրանի և Ադրբեջանի ոլորտի պատասխանատուները քննարկել են նաև Նախիջևան-Ջուլֆա-Թավրիզ և Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային գծերի միավորման հնարավորությունը:

Մ.Վաեզիի այցի շրջանակներում իրանական *Darou Pakhsh* (խոշորագույն դեղագործական ընկերություն), *Iran Khodro* (խոշորագույն ավտոմոբիլաշինական ընկերություն) և ադրբեջանական Սումգայիթի քիմիական արդյունաբերական պարկ, Ադրբեջանի ներդրումային ընկերություն, *Azersun Holding*[5] ընկերությունների միջև ստորագրվել է դեղերի արտադրության և ավտոմոբիլաշինության ոլորտներում համագործակցության վերաբերյալ 4 փաստաթուղթ:

ԱՀ կապի և բարձր տեխնոլոգիաների նախարար Ռ.Գուլուզադեի հետ Մ.Վաեզին քննարկել է սահմանամերձ տարածքներում ռադիոհաճախությունների կարգավորման, կիբեռանվտանգության, բջջային կապի, փոստային ծառայությունների և այլ հարցերի շուրջ համագործակցության զարգացման հեռանկարները:

Մ.Վաեզին հայտարարել է, թե Իրանը վերջին երկու ամսում արագացրել է Խուդաֆերինի հիդրոէլեկտրակայանի շահագործմանն ուղղված աշխատանքները և գործնականում ավարտել է Արաքս գետի վրա ամբարտակի կառուցումը: Նախարարի խոսքով՝ Խուդաֆերինի նախագծի իրագործումը բազում տարիներ բախվել է ձգձգումների՝ կապված քաղաքական ու տեխնիկական խնդիրների հետ, սակայն Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևի Թեհրան կատարած այցից ու համաձայնագրի ստորագրումից հետո Իրանն արագացրել է այդ ուղղությամբ աշխատանքները: «Ներկայումս նախագծի իրագործման համար չկա որևէ խոչընդոտ: Իրանը կավարտի նախագիծը, և դրանից հետո Ադրբեջանը կանի անհրաժեշտ ներդրումների իր մասը»,- ասել է նա:

Ադրբեջանի և Իրանի միջև բարեկամական և գործընկերային հարաբերությունների զարգացման գործում հատուկ ներդրման համար Ի.Ալիևը *«Dostluq»* (Բարեկամություն) շքանշանով է պարգևատրել Մ.Վաեզիին:

[4] Կամրջի շինարարությունը նախատեսվում է ավարտել այս, իսկ նշված երկաթուղային հատվածը՝ 2017թ.:
[5] Ադրբեջանի խոշորագույն ոչ նավթային հոլդինգն է, հիմնադրվել է 1991թ., նրա կազմում գործում են 20-ից ավելի գործարաններ, որոնք մասնագիտացված են սննդարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում:

Ադրբեջան-ԱՄՆ - ԱՄՆ-ը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր լինելով, Բաքվի ագրեսիայի հետևանքով առաջացած լարված իրավիճակում դիվանագիտական խողովակներով մշտական կապի մեջ է գտնվել Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների հետ և վերահաստատել ԼՂ հակամարտության կարգավորման համար ԵԱՀԿ Մինսկի խմբի որդեգրած՝ ուժի կիրառման բացառման, տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման միջազգայնորեն ընդունված սկզբունքները: Հեռախոսակապի միջոցով ՀՀ և ԱՀ նախագահների հետ հակամարտությունը քննարկել է ԱՄՆ փոխնախագահ Ջ.Բայդենը՝ կարևորելով խնդրի համընդհանուր կարգավորումը:

Դատապարտելով շփման գծի երկայնքով կիրառված ցանկացած բռնություն՝ ԱՄՆ Պետքարտուղարության ներկայացուցիչ Մ.Թոները կոչ է արել հակամարտության կողմերին աշխատել խաղաղ համաձայնագրի վրա: Ե՛վ Մ.Թոները, և՛ ԱՀ-ում ԱՄՆ դեսպան Ռ.Մեկուտան նշել են, որ ԼՂ հակամարտությունը չունի ռազմական լուծում:

Միջուկային անվտանգության գագաթաժողովին մասնակցելու նպատակով Վաշինգտոնում գտնվող Ի.Ալիևը հանդիպումներ է ունեցել ԱՄՆ փոխնախագահ Ջ.Բայդենի, ԱՄՆ պետքարտուղար Ջ.Քերիի, ԱՄՆ առևտրի նախարար Փ.Փրիցկերի, Նյու Հեմփշիրի նախկին նահանգապետ, ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշ ավագի աշխատակազմի ղեկավար Ջորջ Սունունուի, ԱՄՆ մի շարք կոնգրեսականների, *«General Electric»*[6] և *«Armitage International»*[7] ընկերությունների, Քարնեգի հիմնադրամի[8], *«Export-Import»*[9] բանկի ղեկավարների հետ:

Ադրբեջանական լրատվամիջոցների հրապարակումների համաձայն, Վաշինգտոնում Ջ.Քերիի հետ հանդիպելու և առավել բարենպաստ մթնոլորտ ապահովելու համար աշխատել է *«Podesta Group»* լոբբիստական ընկերությունը: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ վաշինգտոնյան այցի ընթացքում Ի.Ալիևը ԱՄՆ պաշտոնյաների կողմից խիստ քննադատության չի արժանացել երկրում մարդու իրավունքների կոպտագույն ոտնահարումների համար:

[6] Ամերիկյան կազմակերպություն է, որը զբաղվում է լոկոմոտիվների, էներգետիկ կայանների, գազային տուրբինների, ավիացիոն շարժիչների, կենցաղային և լուսավորող տեխնիկայի, բժշկական սարքավորումների, պլաստմասսայի և այլնի արտադրությամբ:

[7] Հիմնադրվել է 2005թ. ԱՄՆ պետքարտուղարի նախկին տեղակալ Ռիչարդ Արմիթաժի կողմից, ծառայություններ է մատուցում միջազգային բիզնեսի և ռազմավարական պլանավորման ոլորտներում:

[8] Մասնավոր, ոչ առևտրային կազմակերպություն է, որպես հիմնական նպատակ է հռչակել աջակցությունը աշխարհի երկրների միջև համագործակցությանը: Հիմնադրվել է 1910թ., միջազգային հարաբերությունների ոլորտի ԱՄՆ ամենահին փորձագիտական-վերլուծական կենտրոնն է:

[9] *Export–Import Bank of the United States (Ex-Im Bank).* ԱՄՆ պետական հաստատություն է, որի նպատակը ԱՄՆ ազգային արտահանողների աջակցությունն է:

Բաքուն օգտվել է լոբբիստական խմբերի ծառայություններից, որոնց համառ ջանքերի գնով է հնարավոր դարձել Ջ.Քերի հետ հանդիպումը: ԱՄՆ-ում ԱՀ դեսպանատան և *«Podesta Group»*-ի միջև կնքված պայմանագրով նշված լոբբիստական խումբը ամսական $50.000 վարձատրության դիմաց պետք է ապահովի Ադրբեջանի իշխանությունների շփումները Վաշինգտոնի ազդեցիկ դեմքերի հետ: Ի.Ալիևի այցից հետո կնքված պայմանագիրը վերանայվել է՝ սահմանելով արդեն $70.000 գումար մեկ ամսվա համար, ներառելով նաև խմբի կողմից լրացուցիչ ծառայությունների մատուցման պարտավորություն, որոնք պետք է մատուցվեն ս.թ ապրիլի 6-ից մինչև 2016թ. վերջ: Չնայած այն հանգամանքին, որ *«Podesta Group»*-ի ղեկավարները[10] հրաժարվել են մեկնաբանել սույն տեղեկությունները, լրատվամիջոցներում հայտնվեցին գործարքը հաստատող փաստաթղթերի լուսանկարներ[11]:

Ի.Ալիևի վաշինգտոնյան օրակարգից կարելի է առանձնացնել հրեական խոշորագույն՝ «Հանրային կապերի ամերիկա-իսրայելական հանձնախումբ» (*AIPAC*)[12], «Եվրասիայի հրեաների աջակցության ազգային կոալիցիա» (*NCSEJ*)[13], «Ամերիկյան հիմնական հրեական կազմակերպությունների նախագահների գիտաժողով» (*CPMAJO*)[14] լոբբիստական կազմակերպությունների ղեկավարների հետ հանդիպումը:

Ադրբեջանի և Իսրայելի միջև սերտ համագործակցությունը կարծես փորձ է արվում զարգացնել լոբբիստական մակարդակում ևս՝ նպաստելով ԱՄՆ-ում ադրբեջանական շահերի սպասարկմանը: Վերջին մեկ ամսվա ընթացքում հրեական *«Jewish Journal»* պորտալը հրապարակել է ԱՄՆ հրեական համայնքի որոշ ներկայացուցիչների՝ Ադրբեջանին սատարելու կոչեր: Ընդհանրապես, ԱՄՆ-ում ադրբեջանական լոբբիստական խմբի՝ «Ադրբեջանա-

[10] *«Podesta Group»* լոբբիստական խմբի ղեկավարներն են Թոնի և Ջոն Պոդեստ եղբայրները: Թ.Պոդեստը մասնակցել է Հիլարի Քլինթոնի նախընտրական քարոզարշավին, իսկ Ջ.Պոդեստը Բ.Օբամայի նախկին խորհրդականն է և Հ.Քլինթոնի նախընտրական քարոզարշավի նախկին ղեկավարը:

[11] http://www.contact.az/docs/2016/Politics/041400152907ru.htm#.VzBv2tKLTcu

[12] *AIPAC*-ը համարվում է հրեական ամենաազդեցիկ լոբբիստական կազմակերպություններից մեկը: Ստեղծվելով 1954թ.՝ այն մինչ օրս ծառայում է իր հիմնական նպատակին, այն է՝ տնտեսական, քաղաքական և ռազմական ոլորտներում ամերիկա-իսրայելական կապերի սերտացումը: Նրա ազդեցությունն այնքան մեծ է Վաշինգտոնի վրա, որ Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Ջ.Միրշեյմերը և Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ս.Ոլթն իրենց «Իսրայելական լոբբին և ԱՄՆ արտաքին քաղաքականությունը» գրքում *AIPAC*-ը համարում են հրեամետ լոբբիի «առավել հզոր և հայտնի բաղադրիչ», որն աղավաղում է ԱՄՆ արտաքին քաղաքականության ուղղությունը:

[13] *NCSEJ*-ը հիմնադրվել է 1971թ. խորհրդային հրեաների պաշտպանության նպատակով, ներառում է 50 ազգային կազմակերպություն և 300-ից ավելի տեղական հրեական ֆեդերացիաներ և համայնքներ: Ներկայումս *NCSEJ*-ը Եվրասիայում և Արևելյան Եվրոպայում հրեական շահերը ներկայացնող առաջատար կազմակերպություն է, համագործակցում է տարածաշրջանային երկրների և ԱՄՆ ղեկավարության հետ:

[14] *CPMAJO*-ն միավորում է հրեական ազգային 50 կազմակերպություն:

ամերիկյան ալյանսի» տապալումից և գործունեության դադարեցումից հետո Բաքուն փորձում է գտնել այլ ուղիներ Ադրբեջանի դրական կերպարի ձևավորման և Վաշինգտոնի հետ կայուն կապերի հաստատման նպատակով:

Ադրբեջան-Վրաստան - Ադրբեջանի և Թուրքիայի հետ ռազմավարական համագործակցությունը, Հայաստանի հետ բարեկամական հարաբերությունները, իր տարածքում խոշոր՝ ադրբեջանական և հայկական համայնքների առկայությունը պաշտոնական Թբիլիսիի համար կենսական նշանակություն են հաղորդում ԼՂ հակամարտության գոտում հրահրված ռազմական բախումներին: Ստեղծված իրավիճակում Վրաստանը փորձեց ամեն կերպ չեզոքություն պահպանել կողմերի նկատմամբ:

Վրաստանի ԱԳ նախարար Մ.Ջանելիձեն հեռախոսակապի միջոցով Հայաստանի և Ադրբեջանի իր գործընկերներին մտահոգություն հայտնեց Լեռնային Ղարաբաղում իրավիճակի կտրուկ սրման կապակցությամբ՝ շեշտելով ռազմական գործողությունների դադարեցման և հակամարտության կարգավորման անհրաժեշտությունը: Մ.Ջանելիձեն անգամ հետաձգեց նախօրոք ծրագրած այցը Լեհաստան: Կողմերի հետ մշտական կապ էր պահպանում նաև Վրաստանի պաշտպանության նախարար Թ.Խիդաշելին:

Վրաստանի փորձագիտական շրջանակներն ընդհանուր առմամբ նույնպես հանդես եկան չեզոք դիրքերից՝ հիմնականում ռազմական բախումների հետևում տեսնելով Ռուսաստանի դերակատարումը:

Քննարկվեցին նաև լայնածավալ պատերազմի դեպքում Վրաստանի տարածքով Ռուսաստանից Հայաստան սպառազինության մատակարարման համար անհրաժեշտ ցամաքային միջանցքի հարցում Վրաստանի դիրքորոշման հնարավոր տարբերակները: Վրաստանի մշակույթի նախկին նախարար, «Իվերիա» հասարակական շարժման նախագահ Ն.Ռուրուայի կարծիքով, Վրաստանը, հաշվի առնելով Ադրբեջանի և Հայաստանի հետ բարեկամական հարաբերությունները, պարտավոր է չեզոքություն պահպանել և չթույլատրել Ռուսաստանին իր տարածքով Հայաստան զենքի հնարավոր առաքումը, քանի որ դա կդիտվի որպես աջակցություն կողմերից մեկին: Հետաքրքրական է, որ նույն համատեքստում հասարակական-քաղաքական շրջանակները լռություն պահպանեցին նույն Վրաստանի տարածքով Թուրքիայից Ադրբեջան ռազմամթերքի հնարավոր առաքումների նկատմամբ պաշտոնական Թբիլիսիի դիրքորոշման հարցի վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, սադրիչ հայտարարություններով հանդես եկան Վրաստանի ադրբեջանական համայնքի ղեկավարությունը և Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, «Միացյալ ազգային շարժում» կուսակցության անդամ Ազեր Սուլեյմանովը: Ադրբեջանական համայնքի ղեկավարությունը հայտարարեց իր կողմից իբր ցուցակագրված 1000-ից ավելի կամավորների մասին, որոնք պատրաստ են «Ադրբեջանին սպառնացող վտանգի դեպքում կամ գերագույն գլխավոր հրամանատար Ի.Ալիևի հրամանով անմիջապես մեկնել ճակատ»: Արժե նաև նշել, որ Վրաստանի օրենսդրությունը թույլ չի տալիս իր քաղաքացիներին ծառայել այլ պետությունների ԶՈՒ-ում:

Իսկ Մ.Սաակաշվիլու հիմնադրած կուսակցության անդամ Ա.Սուլեյմանովը հայտարարեց 2008թ. վրաց-ռուսական պատերազմի ընթացքում իր ղեկավարության տակ ռազմական գործողություններին իբր մասնակցած գումարտակը վերականգնելու և Ադրբեջան մեկնելու մտադրության մասին:

Ինքը՝ Մ.Սաակաշվիլին, Ադրբեջանին իր զորակցությունը հայտնեց յուրօրինակ ձևով՝ ֆեյսբուքյան էջում տեղադրելով 2012թ. ԱՀ Միլի մեջլիսում իր ելույթը և ադրբեջաներենով ավելացնելով 1918թ. Ադրբեջանի Ազգային ժողովի նախագահ Մ.Ռասուլզադեի խոսքերը. *«Bir kərə yüksələn bayraq bir daha enməz!»*, ինչը թարգմանաբար նշանակում է «Բարձրացված դրոշը այլևս չի իջեցվի»:

Մ.Սաակաշվիլու կողմնակիցներից կազմավորված և Դոնբասի մարտական գործողություններին մասնակցող «Վրացական լեգեոնի» հրամանատար Մ.Մամուլաշվիլին նույնպես հայտարարեց ԼՂ հակամարտության գոտի մեկնելու պատրաստակամության մասին:

Վրաստանը և Ադրբեջանը շարունակում են զարգացնել համագործակցությունը տրանսպորտային, հատկապես երկաթուղային հաղորդակցության ոլորտում:

Բաքվում կայացած Միջազգային տրանսկասպիական տրանսպորտային երթուղու օպերատորների հանդիպման ընթացքում համաձայնագիր է ստորագրվել Միջազգային տրանսկասպիական կոնսորցիումի ստեղծման մասին: Կոնսորցիումի անդամներ են դարձել *ADY Express* և *ACSC Logistics* ընկերություններն Ադրբեջանից, *Trans Caucasus Terminals*-ը՝ Վրաստանից, *AO KTZ Express*-ը՝ Ղազախստանից:

Իսկ Ռումինիայի Կոնստանցա քաղաքում Ադրբեջանի, Վրաստանի, Ռումինիայի և Մոլդովայի երկաթուղային պատասխանատուները ստորագրել են տարանցիկ բեռնափոխադրումների ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. ապրիլ

Ջոնի Մելիքյան*

Վրաստանի իշխանությունների արտաքին քաղաքական օրակարգն ընթացիկ տարվա ապրիլին կարելի է անվանել հագեցած՝ լի ինչպես մարտահրավերներով (Ղարաբաղյան հակամարտություն) և լարվածությամբ (Ռուսաստան), այնպես էլ որոշակի նվաճումներով՝ կապված երկրի արտաքին քաղաքականության եվրոպական և եվրատլանտյան վեկտորների հետ: Վրաստանի դիրքորոշումը, ելնելով ստեղծված տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրողություններից, եղել է հավասարակշռված, բազմամակարդակ և արագ արձագանքող: Մենք կանգ կառնենք Վրաստանի նախագահի և վարչապետի արտաքին քաղաքական հիմնական այցելությունների վրա: Տեսության երկրորդ մասում մանրամասն կանդրադառնանք Ղարաբաղյան հակամարտության գոտում ստեղծված իրադրության հանդեպ Վրաստանի դիրքորոշմանը, ռուս-վրացական հարաբերություններին և եվրոպական ու եվրատլանտյան օրակարգում ձեռք բերված առաջընթացին:

Ապրիլի սկզբին վրացական պատվիրակությունը՝ նախագահ Գեորգի Մարգվելաշվիլու գլխավորությամբ, ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հրավերով այցելեց Միացյալ Նահանգներ: Այցելության նպատակն էր մասնակցությունը միջուկային անվտանգության միջազգային համաժողովին (*Nuclear Industry Summit – 2016*), որին մասնակցում էին աշխարհի ավելի քան 40 երկրների ներկայացուցիչներ: Վաշինգտոնում կայացած միջոցառմանը Վրաստանի նախագահն արժանացավ «Ատոմը հանուն խաղաղության» պարգևի միջուկային անվտանգության գործում նրա երկրի ներդրած ավանդի համար: Գագաթաժողովին (մարտի 30-ապրիլի 1) մասնակցությունից բացի՝ Վրաստանի նախագահը երկկողմանի բանակցություններ վարեց ԱՄՆ քաղաքական ղեկավարության ներկայացուցիչների հետ, որոնցում քանիցս բարձրացվեց ԱՄՆ օրակարգին Վրաստանի ավելի ակտիվ մասնակցության

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

անհրաժեշտության հարցը: Գ.Մարգվելաշվիլին հանդիպումներ ունեցավ նաև ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթի, Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի և այլ պետությունների ղեկավարների հետ:

Ապրիլի վերջին (ապրիլի 20-23) Վրաստանի նախագահն առաջին տիկնոջ հետ պաշտոնական այցով գտնվել է Ֆրանսիայում: Ապրիլի 21-ին ֆրանսիացի իր պաշտոնակցի՝ Ֆրանսուա Օլանդի հետ հանդիպմանը Գ.Մարգվելաշվիլին քննարկել է բազմաթիվ հարցեր՝ միջպետական քաղաքական-տնտեսական հարաբերություններից մինչև անվտանգության ոլորտ, ինչպես նաև հարցեր եվրոպական (Վրաստանի կողմից Ասոցացման մասին համաձայնագրի՝ *DCFTA*-ի կատարումը) և եվրատլանտյան ինտեգրման մասին: Այցի շրջանակում Գ.Մարգվելաշվիլին հանդիպել է նաև Ֆրանսիայի Սենատի նախագահ Ժերար Լարշենի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Իրինա Բոկովայի հետ:

Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու արտաքին քաղաքական գործունեության ժամանակացույցը նույնպես բավական լարված է եղել: Ապրիլի 11-12-ին Վրաստանի վարչապետը, գլխավորելով վրացական պատվիրակությունը, աշխատանքային այցով մեկնել է Արաբական Միացյալ Էմիրություններ, որտեղ մասնակցել է Դուբայի ամենամյա ներդրումային համաժողովին: Գ.Կվիրիկաշվիլին ելույթ է ունեցել համաժողովի լիագումար նիստում (*Global Leaders Debate*), որտեղ խոսել է Վրաստանի ռազմավարական աշխարհագրական դիրքի, երկրի նպաստավոր ներդրումային մթնոլորտի, տարանցման պոտենցիալի և բիզնեսի վարման դյուրինության մասին: Այցի շրջանակներում Վրաստանի վարչապետը հանդիպել է ԱՄԷ վարչապետ Մոհամեդ բին Ռաշիդ ալ-Մակթումի հետ և քննարկել առևտրատնտեսական հարաբերությունների, դրանց պոտենցիալի վերաբերյալ հարցեր: Գ.Կվիրիկաշվիլին հանդիպել է նաև Աբու Դաբիի թագաժառանգ, շեյխ Մոհամեդ բին Զայեդ ալ-Նայիանի հետ:

Ապրիլի 19-21-ին Վրաստանի վարչապետն ուղևորվել է Ստրասբուրգ, որտեղ մասնակցել է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի գարնանային նստաշրջանի խորհրդաժողովին: Իր ելույթում նա պատվիրակներին պատմել է Վրաստանում տիրող ներքաղաքական իրավիճակի, բարեփոխումների, առաջիկա խորհրդարանական ընտրությունների և ԵՄ-ի հետ Վրաստանի փոխհարաբերությունների, ինչպես նաև Բրյուսելից պաշտոնական Թբիլիսիի ակնկալիքների մասին՝ կապված վիզային ռեժիմի ազատականացման հետ:

Վրաստանի վարչապետի հաջորդ աշխատանքային այցը (ԱՄՆ) տեղի ունեցավ ապրիլի 25-29-ին: Այցելության շրջանակներում Գ.Կվիրիկաշվիլին Վաշինգտոնում հանդիպեց ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենի հետ: Նրանք քննարկեցին Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման հարցերը: Կողմերն ընդգծեցին նաև Միացյալ Նահանգների և Վրաստանի միջև ռազմավարական գործընկերության կարևորությունը՝ շեշտադրումը կատարելով պաշտպանության և անվտանգության հարցերի, ինչպես նաև տնտեսական ոլորտում համագործակցության, դրանց հետագա խորացմանն ուղղված քայլերի վրա: Այցի շրջանակներում Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ նաև ԱՄՆ Սենատի և Ներկայացուցիչների պալատի անդամների (Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ, հանրապետական սենատոր Բոբ Քորկերի և նույն կոմիտեի անդամ, դեմոկրատ սենատոր Բեն Քարդինի, հանրապետական սենատորներ Ջոն Մակքեյնի, Ջեֆ Սեշենի, Կոնգրեսի՝ Վրաստանի հետ Բարեկամության խմբի համանախագահ, կոնգրեսական Թեդ Պոյի և Ջերալդ Քոնոլիի, Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Էդ Ռոյսի և կոնգրեսական Էլիոթ Էնգելի) հետ: Գ.Կվիրիկաշվիլին աշխատանքային հանդիպումներ ունեցավ նաև Համաշխարհային բանկի նախագահ Ջիմ Են Քիմի և Արժույթի միջազգային հիմնադրամի կարգադրիչ-փոխտնօրեն Մին Չժուի հետ, հանդիպեց Մակքեյնի ինստիտուտի տնօրեն Դևիդ Քրամերի և «ուղեղային կենտրոնների» այլ ղեկավարների հետ: Նա ելույթ ունեցավ Խաղաղության ինստիտուտում, Իլինոյսի համալսարանում, ինչպես նաև հանդիպեց Բոստոնում բնակվող վրացի ուսանողների հետ:

Հարկ է նշել նաև Վրաստանի կառավարության և խորհրդարանի այլ անդամների այցելությունների մասին: Վրաստանի արտգործնախարար Միխայիլ Ջանելիձեն ապրիլի 18-21-ին այցելեց Նյու Յորք՝ մասնակցելու համար ՄԱԿ կազմակերպած կայուն զարգացման բանավեճերին: Նա հանդիպումներ ունեցավ ՄԱԿ Պարսից ծոցի երկրների հետ համագործակցության խորհրդի անդամների հետ: Ապրիլի 27-ին, Բրյուսել կատարած այցելության ժամանակ, Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուպաշվիլին հանդիպել է Եվրախորհրդարանի նախագահ Մարտին Շուլցի հետ և քննարկել վիզային ռեժիմի ազատականացման գործընթացը, Վրաստանի խորհրդարանի և Եվրախորհրդարանի միջև համագործակցությունը, այս տարվա աշնանը Վրաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները, ինչպես նաև դատական համակարգի անկախության և ԶԼՄ ազատության հարցերը:

Վրաստանը և Ղարաբաղյան հակամարտությունը - Անցած ամիս տարածաշրջանային ամենահրատապ հարցը մարտական գործողությունների վերսկսումն էր Ղարաբաղյան հակամարտության գոտում: Չնայած ակտիվ մարտական գործողությունները սկսվեցին ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը և ավարտվեցին ապրիլի 5-ին, այնուամենայնիվ, առաջին իսկ ժամերից Վրաստանի ղեկավարությունը հանդես եկավ հաշտարար հայտարարություններով և պաշտոնական Թբիլիսիի՝ հակամարտող կողմերի միջև որպես հնարավոր միջնորդ հանդես գալու առաջարկություններով:

Ղարաբաղյան հակամարտության գոտու իրավիճակի հարցը քննարկվեց ապրիլի 3-ին Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլու նախաձեռնած հատուկ նիստում: Հանդիպմանը ներկա էին Վրաստանի ԱԳՆ ղեկավարը, խորհրդարանական կոմիտեների նախագահները և ուժային կառույցների ղեկավարները, որոնք կառավարության ղեկավարին ներկայացրին Լեռնային Ղարաբաղի իրավիճակի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը:

Ավելի ուշ՝ ապրիլի 3-ի երեկոյան, Հայաստանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը տեղեկացրեց այն մասին, որ ՊՆ ղեկավար Սեյրան Օհանյանը հեռախոսով իր վրացի պաշտոնակցի՝ Թինաթին Խիդաշելու հետ քննարկել է Լեռնային Ղարաբաղում իրավիճակի սրացման հարցը: Վրացական լրատվամիջոցներին տված մեկնաբանություններում Վրաստանի պաշտպանության նախարար Թ.Խիդաշելին նշել է, որ Հայաստանը և Ադրբեջանը չեն դիմել վրացական կողմին որևէ խնդրանքով: Ըստ նրա՝ պաշտպանության նախարարությունը, ինչպես և մյուս կառույցները, գտնվում են երկու հարևանների հետ մշտական կապի մեջ: Վրաստանի ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ Վախթանգ Կապանաձեն, իր հերթին, նշել է, որ հնարավորության դեպքում Վրաստանը պետք է «միջնորդի դեր խաղա Ղարաբաղյան հակամարտությունում»:

Այս թեմայի վերաբերյալ հրապարակային հայտարարություններ արեցին Վրաստանի նախագահը և վարչապետը Թբիլիսիում ապրիլի 4-5-ին անցկացված «ՆԱՏՕ-Վրաստան. Ժողովրդական դիվանագիտության համաժողով-2016» գիտաժողովում: Նախագահ Գեորգի Մարգվելաշվիլին հարևան երկրներին հորդորեց «որքան հնարավոր է շատ ջանքեր գործադրել դիվանագիտության միջոցով, ինչպես նաև միջազգային հանրության ակտիվ մասնակցությամբ սրացումը խաղաղ ավարտելու համար»: Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին մտահոգություն հայտնեց «հարևան երկրներում իրավիճակի

թեժացման հետ կապված» և հույս հայտնեց, որ միջազգային հանրության ջանքերի շնորհիվ հնարավոր կդառնա թուլացնել լարվածությունը: Ապրիլի 21-ին նա հանդես է եկել ևս մեկ հայտարարությամբ ԵԽԽՎ խորհրդաժողովում (Ստրասբուրգ) իր ելույթի ժամանակ: Նա նշել է, որ Հայաստանի և Ադրբեջանի իշխանություններին առաջարկել է բանակցություններ անցկացնել Վրաստանում՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար, քանի որ այն «կարող է բացասաբար ազդել ամբողջ տարածաշրջանի անվտանգության վրա»:

Ապրիլի 5-ին Թբիլիսիում, Վրաստանի կառավարության շենքում տեղի ունեցավ ևս մեկ աշխատանքային հանդիպում՝ նվիրված Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակին, որին մասնակցեցին վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին, ուժային նախարարությունների ղեկավարները, ԱԳ նախարարը, ինչպես նաև երկրի նախագահ Գ.Մարգվելաշվիլին և Անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին:

Հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության վերաբերյալ հայտարարություններով հանդես եկան նաև ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեն, Վրաստանի ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ Վախթանգ Կապանաձեն, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուպաշվիլին, խորհրդարանական մեծամասնության ղեկավար Գեորգի Վոլսկին, վրացի պատգամավորներ և հասարակական-քաղաքական գործիչներ:

Վրացի փորձագետները նույնպես անդրադարձել են ոչ միայն հարցին Վրաստանի հնարավոր միջնորդությանը (Վախթանգ Մախսայա), այլև կանխատեսումներ են արել, թե ինչպիսին կարող են լինել հետևանքները լայնամասշտաբ ռազմական գործողությունների, հակամարտության մասնակիցների ընդլայնման (Ռուսաստան, Թուրքիա, Իրան), ինչպես նաև մարտական գործողությունների՝ Վրաստանի տարածք տեղափոխման (Սերգի Կապանաձե) պարագայում: Այսպիսով, վրացական փորձագիտական հանրույթը, որը մինչ այդ այնքան էլ լուրջ չէր վերաբերվում ղարաբաղյան հիմնախնդրին, այժմ փորձում է վերիմաստավորել այն՝ ջանալով օպտիմալ լուծումներ և սցենարներ գտնել, որոնք կբխեն Վրաստանի ազգային անվտանգության շահերից:

Ամփոփելով այս հայտարարությունները՝ նշենք, որ պաշտոնական Թբիլիսիի պահվածքի տրամաբանությունը եղել է պոզիտիվ չեզոքության պահպանումը: Այս հռետորաբանությունը կապված է Վրաստանում էթնիկ հայերի (168 հազ. 2014թ. մարդահամարի տվյալներով) և ադրբեջանցիների (233 հազ.)

մեծ թվաքանակի առկայության հետ, ինչպես նաև հիմնվում է Վրաստանի Ազգային անվտանգության հայեցակարգի վրա, որտեղ նշված է, որ «Ղարաբաղյան հակամարտության չկարգավորվածությունը սպառնալիք է ստեղծում տարածաշրջանի բոլոր երկրների կայունության համար»: «Վրաստանը ողջունում է այս հակամարտության խաղաղ կարգավորումը, ինչպես նաև միջազգային հանրության ավելի ակտիվ մասնակցությունը խաղաղ գործընթացին: Սա կնպաստի տարածաշրջանային անվտանգության և համագործակցության ամրապնդմանն ու զարգացմանը»,- ասվում է փաստաթղթի տեքստում:

Վրաստան-Ռուսաստան **-** Ռուս-վրացական հարաբերությունների համար անցած ապրիլը, ինչպես և մարտը, բավական լարված է եղել: Ապրիլի սկզբին բանավեճի թեման ռուսաստանյան պատվիրակության մասնակցությունն էր ԵԱՀԿ ԽՎ՝ Թբիլիսիում 2016թ. հուլիսի 1-5-ին կայանալիք ամառային նստաշրջանին: Հիմնական խնդիրը Ռուսաստանի պատվիրակության կազմում այն պատվիրակների ներկայությունն է, ովքեր այցելել են Աբխազիա և Հարավային Օսիա, որոնք Վրաստանը համարում է «օկուպացված տարածքներ» և որտեղ այցելելու համար մուտքի որոշակի ընթացակարգ գոյություն ունի՝ Վրաստանի տարածքից: Մնացած բոլոր երթուղիները (Ռուսաստանի հյուսիսկովկասյան տարածքից) արգելված են Վրաստանի «Օկուպացված տարածքների մասին» օրենքով:

Ապրիլի սկզբին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր («Ազատ դեմոկրատներ» ընդդիմադիր խմբակցություն) Վիկտոր Դոլիձեն վրացական լրատվամիջոցներին ասել է, որ Ռուսաստանի խորհրդարանական պատվիրակությունը պետք է գա Թբիլիսի՝ ԵԱՀԿ ԽՎ նստաշրջանին մասնակցելու՝ չխախտելով վրացական օրենսդրությունը: Այս մասին խոսվել է նաև ավելի վաղ՝ մարտի 16-ին, ռուս-վրացական «Կարասին-Աբաշիձե» ձևաչափով բանակցությունների հերթական ռաունդում (Պրահա): Ապրիլի 2-ին «Վրացական երազանք – Դեմոկրատական Վրաստան» խմբակցության նախագահ Գեորգի Վոլսկին ասել է, որ Ռուսաստանի պատվիրակությունը, որը գալու է Վրաստան՝ մասնակցելու ԵԱՀԿ ԽՎ նստաշրջանին, մուտքի հետ կապված խնդիրներ չի ունենա, քանի որ համապատասխան խնդրանքով Վրաստանին արդեն դիմել է ԵԱՀԿ ԽՎ-ն:

Այս ֆոնին ռուս-վրացական հարաբերությունների առավել վիճահարույց հարցն անցած ապրիլին եղել է Ռուսաստանի Դաշնության կազմում Հարավային Օսիայի մուտքի վերաբերյալ հանրաքվեի հնարավոր անցկացու-

մը, ինչի մասին ավելի վաղ հայտարարել էր Հարավային Օսիայի նախագահ Լեոնիդ Տիբիլովը: Պաշտոնական Թբիլիսիի հակազդեցությունը երկար սպասել չտվեց: Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետական նախարար Դավիթ Բաքրաձեի խոսքերով՝ դա «ոչ մի իրավաբանական ուժ չի ունենա»: Վրաստանի փոխարտգործնախարար Դավիթ Զալկալիանին, իր հերթին, հանրաքվեի անցկացման ցանկությունն անվանել է «սադրանք»: Վրաստանի խորհրդարանական մեծամասնության անդամ Գիա Վոլսկին հույս է հայտնել, որ Մոսկվան «ողջամտություն կցուցաբերի»:

Վիճահարույց հարցերից մեկն էլ դարձավ ապրիլի 15-ին ՌԴ Պետդումայի կողմից Ռուսաստանի և Հարավային Օսիայի միջև պետական սահմանի մասին պայմանագրի վավերացումը՝ ստորագրված 2015թ. փետրվարի 18-ին Մոսկվայում (որպես պետական սահմանի հիմք է ընդունվել վարչատարածքային սահմանը ՌԽՖՍՀ-ի և Վրացական ԽՍՀ-ի միջև, որը գոյություն ուներ ԽՍՀՄ փլուզման պահին): Դրանից հետո հնչեցին դատապարտող հայտարարություններ վրացական իշխանությունների կողմից: Մեկնաբանելով Ռուսաստանի Պետդումայի որոշումը՝ Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական հավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին նշել է, որ «իրականացվել է ապօրինաբար ստորագրված ապօրինի պայմանագրի ապօրինի վավերացում»:

Այս ֆոնին դրականն այն էր, որ ավելի քան 7 ամիս ընթացող բանակցություններից հետո ապրիլի սկզբին ռուսաստանյան «Գազպրոմ» պետական ընկերությունը և Վրաստանը համաձայնեցրին և ստորագրեցին ռուսական գազը հին սխեմայով Հայաստան տարանցելու ապահովման և վճարման հերթական պայմանագիրը, որի համաձայն՝ 2016թ. ընթացքում Թբիլիսին նորից կստանա Ռուսաստանից Հայաստան տեղափոխվող բնական գազի 10%-ը:

Արդեն ամսվա վերջին՝ ապրիլի 26-ին, *Associated Press* գործակալությանը տված հարցազրույցում Վրաստանի վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին, խոսելով իր երկրի արտաքին քաղաքականության մասին, նշել է, որ հետխորհրդային Վրաստանի ապագան Եվրամիության և ՆԱՏՕ-ի հետ լինելն է, միևնույն ժամանակ Վրաստանի իշխանությունները պետք է փորձեն կարգավորել հարաբերությունները Ռուսաստանի հետ, բայց ոչ «ի վնաս տարածքային ամբողջականության և ինքնիշխան ընտրության»:

Վրաստան-ԵՄ - Ապրիլին առավել արդյունավետ են եղել Վրաստանի փոխհարաբերությունները ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ, այդ թվում՝ Վրաստանի քաղաքացիների համար ԵՄ վիզային ազատականացման հարցում: Ամսվա սկզ-

բին՝ ապրիլի 2-ին, Թբիլիսի այցելեց Միգրացիայի, ներքին գործերի և քաղաքացիության հարցերով Եվրահանձնակատար Դիմիտրիս Ավրամոպուլոսը, որը Վրաստանի ղեկավարության՝ վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու և կառավարության անդամների հետ բանակցություններում քննարկեց Եվրահանձնաժողովի հաշվետվությունը, որում դրական գնահատական է տրվել Վրաստանում իրականացված բարեփոխումներին, ինչպես նաև օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններին, որոնք նախատեսված են Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրով: Եվրապաշտոնյան հավաստիացրել է պաշտոնական Թբիլիսիին, որ հետագայում ևս աջակցություն կցուցաբերվի Եվրամիության հետ վիզային ռեժիմի ազատականացման գործընթացին: Գնահատելով եվրահանձնակատարի այցը՝ Վրաստանի արտգործնախարար Միխայիլ Ջանելիձեն նշել է, որ Թբիլիսիի և ԵՄ հարաբերություններն «անցնում են նոր մակարդակ», և հույս է հայտնել, որ շուտով Եվրամիության կառույցների կողմից կմտցվի անվիզա ռեժիմ իր երկրի քաղաքացիների համար:

Արդյունքը երևաց հետո, երբ ապրիլի 25-ին Եվրախորհրդարանի քաղաքացիական ազատությունների, արդարադատության և ներքին գործերի կոմիտեները պաշտպանեցին Եվրահանձնաժողովի օրենսդրական առաջարկությունը (արված 2016թ. մարտի 9-ին)՝ անվիզա հաղորդակցություն մտցնել Վրաստանի քաղաքացիների համար: Հաջորդ քայլը լինելու է հարցի քննարկումը Եվրախորհրդարանի մայիսյան լիագումար նիստում, ինչից հետո հարցը կտեղափոխվի ԵՄ Նախարարների խորհուրդ: Երկու օրգանների դրական եզրահանգման դեպքում ԵՄ-ը Վրաստանի քաղաքացիների համար կմտցնի 90-րդ անվիզա ռեժիմը (ցանկացած 180 օրվա ընթացքում) Շենգենյան գոտու տարածքում: Պաշտոնական Թբիլիսին ակնկալում է, որ անվիզա ռեժիմը Վրաստանի քաղաքացիների համար կմտցվի 2016թ. հուլիսի 15-ից:

ԵՄ-Վրաստան խորհրդարանական ասոցիացիայի կոմիտեի խորհրդաժողովում արդեն (ապրիլի 25-26, Բրյուսել) կոմիտեն ընդունել է Վրաստանի իրականացրած «բարեփոխումների հաջողությունը», ինչպես նաև «առաջընթացը բոլոր ոլորտներում», որոնք ընդգրկում են Վիզային ազատականացման գործողությունների պլանի (*VLAP*) բոլոր չորս հատվածները: ԵՄ-Վրաստան ասոցիացիայի կոմիտեն դիմել է Եվրախորհրդարանին՝ հորդորելով ամառային նստաշրջանում դիտարկել Վրաստանին վիզային ազատականացում տրամադրելու հարցը, ինչը գրանցվել է համապատասխան բանաձևում, որն ընդունվել է Բրյուսելում կայացած խորհրդաժողովի արդյունքների հիման վրա:

ԻՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. ապրիլ

Ռոման Կարապետյան*

Իրանի արտաքին քաղաքականության օրակարգն ապրիլին բավական հագեցած էր: Իրանն ամսվա ընթացքում զգալիորեն ակտիվացավ ռազմական և էներգետիկ ոլորտներում, որոնք երկրի արտաքին քաղաքականության անբաժանելի մասն են կազմում: Այս փաստը պայմանավորվում է պատժամիջոցների չեղարկման արդյունքում ստեղծված բավական լայն հնարավորություններով: Իրանը երբեք չի էլ հերքել տարածաշրջանում անվտանգության և խաղաղության հարցերում լիդերի դերի իր նկրտումները և երկրի ինտենսիվ զինումն ու ռազմական արդյունաբերության արդիականացումը պայմանավորում է հենց այս նպատակների իրագործման անհրաժեշտությամբ:

Ապրիլի 6-ին Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հրամանատար Մոհամադ Ալի Ջաֆարին հայտարարեց, որ Իրանը, քաղաքական և դիվանագիտական ճանապարհների հետ մեկտեղ, պատրաստ է նաև ռազմական ճանապարհով պաշտպանել իր անվտանգությունը ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից ագրեսիայի դեպքում: Ավելին, ըստ պաշտոնյայի, Իրանը կշարունակի զարգացնել իր հրթիռային ծրագրերը, և մոտ ապագայում ավելի հեռահար և ավերիչ ուժով հրթիռներ կմտնեն արտադրության փուլ: Հաջորդ օրը նախագահ Հասան Ռոուհանին հայտարարեց, որ Իրանի զինումը միայն պաշտպանողական նպատակներ ունի: Նախագահի խոսքերով, վերջին երկու դարերի ընթացքում Իրանը ոչ մի երկրի վրա չի հարձակվել և չի էլ պատրաստվում, սակայն արտաքին հարձակմանը պետք է միշտ պատրաստ լինել: Ռոուհանին տարածաշրջանի մահմեդական երկրների նկատմամբ վտանգը նույնպես դիտարկում է որպես Իրանին ուղղված սպառնալիք, ուստի իրենք պետք է շարունակեն զարգացնել տնտեսական և գիտական բոլոր ճյուղերը, այդ թվում՝ միջուկային ոլորտը: Հետաքրքիր է, որ Իրա-

* ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, պ.գ.թ.:

նի ղեկավարները չեն խուսափում միջուկային խաղաղ ծրագրերի զարգացման վերաբերյալ խոսելուց՝ դրանով որոշակի ակնարկներ անելով Արևմուտքին:

Իրանի ռազմածովային ուժերի հրամանատար Աբիբոլա Սայարին հայտարարել է, որ Իրանն ավելացնելու է ներկայությունը ծովերում, մասնավորապես՝ Կասպից ծովում հայտնվելու են հրթիռակիր նավեր: Ապրիլի 12-14-ին Իրանում անցկացվեցին ցամաքային զորավարժություններ, իսկ 19-ին Հորմուզի նեղուցում Պակիստանի հետ համատեղ՝ ծովային զորավարժություններ:

Իրանը վստահ է զգում իրեն նաև միջուկային պարտավորությունների կատարման հարցում: Վաշինգտոնում կայացած միջուկային անվտանգության հարցերով ֆորումի ժամանակ ԱԷՄԳ ղեկավար Յուկիա Ամանոն ասել է, որ Իրանը ոչ միայն ամբողջությամբ կատարել է ստանձնած միջուկային պարտավորությունները, այլ նաև ստորագրել է լրացուցիչ արձանագրություններ:

Իրան-ԱՄՆ - Իրան-ԱՄՆ «հեռակա պատերազմն» ապրիլին ավելի ինտենսիվ բնույթ ստացավ: Իրանցի բարձրաստիճան պաշտոնյաները շարունակ մեղադրում են ԱՄՆ-ին Իրանի և տարածաշրջանի ներքին գործերին խառնվելու, տարածաշրջանն ապակայունացնելու և իր նկատմամբ պատժամիջոցների վերացման մասով պարտավորությունների չկատարման մեջ:

Ապրիլի 6-ին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Թոմ Շենոնը հայտարարել է, որ իրենք չեն կարող թույլ տալ ռուսական Սու-30 ռմբակոծիչների և Ս-300 հակաօդային պաշտպանության համակարգերի ներմուծումն Իրան, քանի որ դրանք կարող են օգտագործվել հարձակողական նպատակներով: Սրան ի պատասխան, Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարության անվտանգության հարցերով դեպարտամենտի տնօրեն Միխաիլ Ուլյանովն ասել է, որ ՄԱԿ ԱԽ թիվ 2231 բանաձևը չի արգելում ռուսական ռազմական տեխնիկայի առաքումն Իրան, ուստի չկա որևէ խոչընդոտ Ս-300 համակարգերը և Տ-90 տանկերը Իրան առաքելու հարցում:

Ապրիլի 8-ին ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին հայտարարել է, որ Իրանն ամբողջությամբ կատարում է միջուկային համաձայնագրով նախատեսված կետերը, ուստի այն արժանի է օգտվելու այդ համաձայնագրով ընձեռված հնարավորություններից, այդ թվում՝ Իրանի համար դոլարը պետք է հասանելի լինի: Այս հայտարարությունն արժանացավ որոշ կոնգրեսականների քննադատությանը, ովքեր կոչ արեցին ոչ միայն թույլ չտալ Իրանին

մուտք գործել ԱՄՆ ֆինանսական համակարգ, այլ նաև թարմացնել պատժամիջոցները հրթիռներ փորձարկելու համար:

Ապրիլի 19-ին Նյու Յորքում Իրանի արտաքին գերատեսչության ղեկավար Մոհամադ Ջավադ Զարիֆը հանդիպել է պետքարտուղար Ջոն Քերիի հետ, որից հետո կողմերը հայտարարել են մի քանի սկզբունքային հարցերի շուրջ առաջընթաց գրանցելու մասին: Կողմերը քննարկել են համատեղ գործողությունների համապարփակ ծրագիրը: Քերին նկատել է, որ ԱՄՆ-ը հանել է այն բոլոր պատժամիջոցները, որոնք վերաբերել են Իրանի միջուկային ծրագրերին:

Պենտագոնի ղեկավար Էշթոն Քարթերը հայտարարում է, որ Իրանի հետ միջուկային համաձայնագիրը չի կարող խոչընդոտել ԱՄՆ-ին՝ պայքարել նրա դեմ, քանի որ վերջինս ապակայունացնում է իրավիճակը տարածաշրջանում: Ի պատասխան՝ Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլա Ալի Խամենեին ասել է, որ ոչ մի երկիր չի համարձակվի հարձակվել Իրանի վրա, իսկ հակառակ պարագայում՝ ավերիչ հարված կստանա: Ըստ Խամենեիի, ԱՄՆ-ը, սիոնիստները և նրանց հետևորդները շարունակում են «փափուկ պատերազմ» վարել Իրանի դեմ: Ավելի ուշ Խամենեին հայտարարել է, որ Վաշինգտոնը մտադրված ձևով հակաիրանական տրամադրություններ է ստեղծում աշխարհում, ինչի հետևանքով միջազգային խոշոր ընկերությունները խուսափում են ներդրումներ անել Իրանում:

Թեհրանի և Վաշինգտոնի միջև հարաբերություններն ավելի սրվեցին, երբ Վաշինգտոնի դատարանը որոշում կայացրեց Իրանի սառեցված ակտիվներից $2 մլրդ-ի չափով փոխհատուցում վճարել 1983թ. Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում ահաբեկչության հետևանքով զոհված ամերիկյան 241 զինվորականների ընտանիքներին: Այդ գործողության մեջ ԱՄՆ-ը մեղադրում է «Հըզբոլլահ» շարժմանը և Իրանի բարձրաստիճան զինվորականներին: Իրանի արտգործնախարարության խոսնակ Հոսեյն Ջաբերի Անսարին այս որոշումը «թալան» անվանեց: Այնուհետև պաշտոնական Թեհրանը հայտարարեց այս հարցով միջազգային դատարան դիմելու իր մտադրության մասին: Իրանի արտգործնախարար Մոհամադ Զարիֆը դիմել է ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունին՝ խնդրելով նրա աջակցությունը իրանյան ակտիվները ստանալու հարցում, որոնք սառեցված են ԱՄՆ բանկերում և օգտագործվում են վերջինիս կողմից:

Ապրիլի 20-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Էր Ռիադում մասնակցել է ԱՄՆ-Պարսից ծոցի երկրներ ձևաչափով հանդիպմանը, որտեղ իր ելույթում մեղադրել է Իրանին տարածաշրջանի երկրների ներքին գործերին խառնվելու մեջ՝ կոչ անելով զերծ մնալ իր այդ քաղաքական գծից: Իրանի պաշտպանական գերատեսչության ղեկավար Հոսեյն Դեհղանը հետագայում ասել է, որ անվտանգության և խաղաղության հարցերում ԱՄՆ-ը օգտագործում է երկակի ստանդարտներ՝ դրանք ծառայեցնելով իր շահերին, ինչը կարող է բերել նոր համաշխարհային պատերազմի: Իսկ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժերի հրամանատար Ալի Ֆադավին ասել է, որ ԱՄՆ ռազմական ներկայությունը Պարսից ծոցում տարածաշրջանի գլխավոր մարտահրավերներից է, ինչը գալիս է տարածաշրջանի որոշ երկրների ոչ սուվերեն լինելուց:

Իրան-Եվրոպա - Ապրիլի սկզբին Թեհրան այցելեց Էստոնիայի արտաքին գործերի նախարար Մարինա Կալյուրանդը, իսկ ավելի ուշ՝ Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը: Ուկրաինան պաշտոնապես հայտարարեց, որ հանում է Իրանի նկատմամբ բոլոր պատժամիջոցները: Ապրիլի 12-ին երկօրյա պաշտոնական այցով Թեհրան ժամանեց Իտալիայի վարչապետ Մաթեո Ռենցին: Վերջինս հանդիպումներ է ունեցել Իրանի նախագահի և հոգևոր առաջնորդի հետ: Դրանց արդյունքում ստորագրվել են մի շարք միջպետական համաձայնագրեր, որոնք հիմնականում վերաբերում են տնտեսական և էներգետիկ ոլորտներին: Իտալիայի վարչապետը կարևորել է Իրանի դերը տարածաշրջանում կայունության և ահաբեկչության դեմ պայքարի հարցերում: Կողմերը հույս են հայտնել, որ մոտ ապագայում Իտալիան կրկին կդառնա Իրանի թիվ մեկ գործընկերը Եվրոպայում:

Եվրոպական ուղղության մյուս կարևոր իրադարձությունը կապված էր ԵՄ արտաքին հարցերով հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինիի գլխավորած պատվիրակության այցի հետ: Վերջինիս ուղեկցում էր Եվրահանձնաժողովի յոթ ներկայացուցիչ: Հանդիպումների արդյունքում որոշվել է եվրոպական դիվանագիտության ղեկավարության և Իրանի արտգործնախարարության միջև տարեկան հանդիպումներ կազմակերպել: Կողմերը քննարկել են հարցերի բազմավեկտոր շրջանակներ, այդ թվում՝ էներգետիկ, տնտեսական, ատոմային էներգետիկային առնչվող, տարածաշրջանային անվտանգության հետ կապված հարցեր: Իրանի արտգործնախարար Զարիֆի հետ համատեղ

մամուլի ասուլիսի ժամանակ Մոգերինին ասել է, որ Իրանում հրթիռների փորձարկումով չի խախտվում միջուկային համաձայնագիրը, սակայն այն որոշակի անհանգստության տեղիք է տալիս:

Ամսվա վերջին Թեհրան ժամանեց Բելգիայի խորհրդարանական պատվիրակությունը: Կողմերի քննարկման հիմնական թեմաներն են եղել ահաբեկչությունը և դրա դեմ պայքարի համատեղ քայլերի մշակումը: Կողմերը պայմանավորվել են նաև ակտիվացնել միջխորհրդարանական համագործակցությունը:

Իրանը կտրուկ ավելացրել է Եվրոպա արտահանվող նավթի ծավալները: Ստորագրված նոր պայմանագրերի համաձայն՝ դեպի Եվրոպա նավթի արտահանման ամենօրյա ծավալները պետք է կազմեն 700 հազար բարել:

Իրան-Հարավային Կովկաս, Ռուսաստան - Ապրիլի 2-ից Լեռնային Ղարաբաղում իրավիճակի սրման պայմաններում Իրանը բավական մեծ ակտիվություն դրսևորեց: Երկրի արտաքին գործերի նախարարությունը պաշտոնական հաղորդագրություն տարածեց, որով կողմերին կոչ էր անում դադարեցնել ռազմական գործողությունները և անցնել հիմնախնդրի կարգավորման բանակցային ճանապարհին: Իրանի պաշտպանության նախարար Հոսեյն Դեհղանը հեռախոսազրույցներ է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի իր գործընկերների հետ՝ պատրաստակամություն հայտնելով օգնություն ցուցաբերել հակամարտության կարգավորման հարցում: Միջնորդական առաքելություն իրականացնելու պատրաստակամություն է հայտնել նաև Իրանի արտգործնախարար Մոհամադ Զարիֆը Հայաստանի գործընկեր Էդվարդ Նալբանդյանի հետ հեռախոսազրույցի ժամանակ: Հայաստանում Իրանի դեսպանատան ռազմական կցորդը հանդիպում է ունեցել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Դավիթ Տոնոյանի հետ, պայմանավորվածություն է ձեռք բերվել փոխանակել տեղեկատվություն՝ ապատեղեկատվությունից խուսափելու համար:

Ապրիլի 5-ին, վաղօրոք կայացված պայմանավորվածության համաձայն, Իրանի Ռամսար քաղաքում տեղի է ունեցել Իրանի, Ադրբեջանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների 4-րդ եռակողմ հանդիպումը: Իրանի արտգործնախարար Մոհամադ Զարիֆը ադրբեջանցի գործընկեր Էլմար Մամեդյարովին կոչ է արել թույլ չտալ նոր ճգնաժամ տարածաշրջանում: Այստեղ ստորագրվել է երկու փաստաթուղթ՝ սկզբունքների համատեղ հռչակագիր և

առաջիկա երկու տարիների համար համատեղ գործողությունների պլան: Երկրորդ փաստաթղթում նշվող համագործակցության հիմնական ոլորտներն են տարանցման հարցերը, էներգետիկան, զբոսաշրջությունը, մշակույթը:

Ակնհայտ է, որ պաշտոնական Թեհրանն աստիճանաբար մեծացնում է մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացում: Ապրիլի 6-ին Իրանի Մեջլիսի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով հանձնաժողովի ղեկավար Ալաեդին Բորուջերդին հանդիպել է Թեհրանում Ռուսաստանի դեսպան Լևոն Ջաղարյանի հետ: Կարևորելով Ռուսաստանի միջնորդական դերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում՝ իրանցի պաշտոնյան նշել է, որ Իրանը տարածաշրջանում ունի բավական մեծ դերակատարում: Կարծում ենք, սրանով Թեհրանը փորձում է ակնարկել ղարաբաղյան հարցում իր մասնակցության մեծացման մտադրությունների մասին:

Բաքվում կայացել է Ադրբեջանի, Իրանի և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարների առաջին եռակողմ հանդիպումը: Կողմերը ստորագրել են համատեղ հռչակագիր, որով նախատեսում են զարգացնել եռակողմ համագործակցությունը տնտեսության, էներգետիկայի, առևտրի, տրանսպորտի, ենթակառուցվածքների, մշակույթի, զբոսաշրջության և այլ ոլորտներում, համատեղ պայքարել տարածաշրջանային անվտանգությանը սպառնացող մարտահրավերների, մասնավորապես՝ ծայրահեղականության, ահաբեկչության և թմրաբիզնեսի դեմ: Կողմերը քննարկել են նաև Կասպից ծովի կարգավիճակի հետ կապված հարցեր: Իրանի արտգործնախարար Մոհամադ Զարիֆը Բաքվում հանդիպել է նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ: Կողմերը, ի թիվս երկկողմ համագործակցության խնդիրների, քննարկել են նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հարցը:

Ռուսաստանի հետ Իրանի հարաբերությունները շարունակում են զարգանալ, թեպետ դրա տնտեսական կողմը որոշակիորեն հետ է մնում: Իրանի արտգործնախարար Մոհամադ Զարիֆը հայտարարել է, որ Ռուսաստանը եղել է և կշարունակի մնալ Իրանի բարեկամը և ռազմավարական գործընկերը, անկախ նրանից, թե ինչ երկրների հետ Իրանը կզարգացնի իր հարաբերությունները: Եվրասիայի երկրների պառլամենտների խոսնակների առաջին խորհրդակցության շրջանակներում Իրանի Մեջլիսի խոսնակ Ալի Լարի-

ջանին հանդիպել է Ռուսաստանի դաշնային խորհրդի խոսնակ Վալենտինա Մատվիենկոյի հետ:

Ապրիլի վերջին պաշտպանության նախարար Հոսեյն Դեհղանի գլխավորած պատվիրակությունը Մոսկվայում մասնակցել է անվտանգության հարցերով 5-րդ միջազգային կոնֆերանսին: Դեհղանը հանդիպում է ունեցել իր ռուս գործընկեր Սերգեյ Շոյգուի հետ, որի ընթացքում հիմնականում քննարկվել են ահաբեկչության դեմ պայքարի, տարածաշրջանային անվտանգության հարցեր: Դեհղանը Մոսկվայում հանդիպել է նաև Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ: Հանդիպման ժամանակ կողմերը քննարկել են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը՝ կարծիք հայտնելով, որ այն չունի ռազմական լուծում:

Ապրիլի կեսերին Երևան ժամանեց Իրանի էներգետիկայի նախարար Համիդ Չիտչիանի գլխավորած պատվիրակությունը: Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի հետ հանդիպման ժամանակ կողմերը քննարկել են տնտեսության և էներգետիկայի ոլորտներում հետագա համագործակցության զարգացման հարցեր: Երևանում Ռուսաստանի և Վրաստանի էներգետիկ ոլորտի պատասխանատուների հետ ստորագրվել է ոլորտում համագործակցության վերաբերյալ քառակողմ համաձայնագիր: Կազմվել է այս չորս երկրների էներգահամակարգերը միավորող ծրագրերի իրականացման ճանապարհային քարտեզը:

Իրան-«մահմեդական աշխարհ» - Շարունակվում է դիվանագիտական հեռահար պայքարն Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև: Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար Ադել ալ-Ջուբեյրան հայտարարել է, որ եթե Իրանը շարունակի ագրեսիվ քաղաքականությունը Պարսից ծոցում և խառնվի տարածաշրջանի երկրների ներքին գործերին, իրենք ավելի կոշտ միջոցառումների կդիմեն: Պաշտոնական Թեհրանը մեղադրում է Էր Ռիադին տարածաշրջանի մահմեդական երկրներում, մասնավորապես՝ Եմենում վարվող ագրեսիվ քաղաքականության մեջ: Իրանը մեղադրում է Սաուդյան Արաբիային նաև ծոցի այլ երկրների հետ միասին Իրանի դեմ գործող ահաբեկչական խմբավորումներ կազմավորելու մեջ:

Ապրիլին իսլամական աշխարհում կարևորագույն քաղաքական իրադարձությունը Ստամբուլում անցկացված Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ երկրների ղեկավարների 13-րդ հանդիպումն էր: Այստեղ

Իրանի արտգործնախարար Մոհամադ Զարիֆն իր ելույթում մեղադրում է Սաուդյան Արաբիային տարածաշրջանում Իրանի դեմ գործողությունները ղեկավարելու համար: Ստամբուլում Իրանի նախագահ Հոսեյն Ռոուհանին հանդիպումներ է ունեցել Բրունեյի, Օմանի, Ինդոնեզիայի և այլ մահմեդական երկրների բարձրաստիճան ղեկավարների հետ: Քննարկումների հիմնական թեմաներն են եղել իսլամական երկրների համագործակցության, տարածաշրջանային անվտանգության և ահաբեկչության դեմ պայքարի հարցերը: Ռոուհանին հանդիպել է նաև Թուրքիայի գործընկեր Էրդողանի հետ, ստորագրվել են կրթության, արդարադատության և այլ ոլորտներին առնչվող 8 միջպետական համաձայնագրեր:

Արաբական երկրների հետ Իրանի հարաբերությունները հեռու են դրական տեղաշարժեր գրանցելուց: Հորդանանը, Իրանին մեղադրելով արաբական երկրների գործերին խառնվելու մեջ, իր դեսպանին հետ է կանչում Թեհրանից՝ շարունակելով Էր Ռիադի մեկնարկած «արշավը»: Նույն պատճառաբանությամբ Իրանին սպառնում է նաև Բահրեյնը, որն Էր Ռիադից հետո երկրորդ պետությունն էր, որ սառեցրել է դիվանագիտական հարաբերություններն Իրանի հետ:

Լայն արձագանք գտավ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի այցն Իրան: Նազարբաևը հանդիպումներ է ունեցել Իրանի գործընկեր Ռոուհանիի և հոգևոր առաջնորդ Խամենեիի հետ: Այցի հիմնական նպատակն է եղել տնտեսությանը և անվտանգությանն առնչվող հարցերի քննարկումը: Ղազախստանի նախագահին ուղեկցող գործարարներն իրանցի գործընկերների հետ համագործակցության ավելի քան 60 պայմանագիր են ստորագրել:

Սիրիական հարցը շարունակում է մնալ Իրանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների շարքում: Սիրիական կառավարության հետ ստորագրված պայմանագրի համաձայն՝ ամսվա սկզբին Իրանի հատուկջոկատային զինվորական խումբ է մեկնել Սիրիա խորհրդատվական աշխատանքներ իրականացնելու նպատակով: Պաշտոնական Թեհրանը հայտարարել է, որ իրենք թույլ չեն տա Սիրիայի տրոհումը և ամեն ինչ կանեն նրա միասնականության պահպանման համար: Իրանի հոգևոր առաջնորդի միջազգային հարցերով խորհրդական Ալի Վելայեթիի խոսքերով, Սիրիայում իշխանության ղեկին Ասադի մնալն Իրանի համար սկզբունքի հարց է. Ասադն

ընտրվել է սիրիացի ժողովրդի կողմից և պետք է մնա իշխանության ղեկին մինչև նախագահության ժամկետի ավարտը:

Մերձավոր Արևելքում մյուս կարևոր խնդիրն առնչվում է նավթի շուկայի կայունացմանն ուղղված բանակցություններին: Նավթ արդյունահանող երկրները պահանջում են Իրանից նվազեցնել նավթի արդյունահանման ծավալները՝ դրանք հասցնելով 2016թ. հունվարի մակարդակին: Իրանն իր հերթին մեղադրում է վերջիններիս նավթի գները դիտավորյալ իջեցնելու մեջ՝ դրանում Իրանի դեմ միտում տեսնելով:

Այլ ուղղություններ - 1979թ. իսլամական հեղափոխությունից ի վեր առաջին անգամ Իրան ժամանեց Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահը: Ջեյկոբ Զումանի և իրանցի գործընկեր Հասան Ռոուհանիի միջև հանդիպման շրջանակներում ստորագրվել են արտադրությանը, առևտրին, գյուղատնտեսության ոլորտներին վերաբերող 8 միջպետական պայմանագրեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև նավթի արտահանման վերաբերյալ:

Ապրիլի 17-ին Թեհրանում հանդիպել են Իրանի և Հնդկաստանի արտգործնախարարները: Կողմերը կարևորել են երկկողմ համագործակցությունը պաշտպանության, անվտանգության, զբոսաշրջության, մշակույթի ոլորտներում: Կողմերը հատկապես կարևորել են արևելք-արևմուտք տրանսպորտային միջանցքի իրագործման ուղղությամբ համատեղ ջանքերի իրականացումը:

Պաշտոնական Թեհրանն ընդունել է բարձրաստիճան պաշտոնյաներ նաև Լատինական Ամերիկայի երկրներից: Վենեսուելայի արտգործնախարար Դելսի Ռոդրիգեսն իրանցի գործընկերոջ հետ հանդիպման ժամանակ կարևորել է Թեհրան-Կարակաս համագործակցության զարգացումը, հատկապես որ երկուսն էլ նավթ արդյունահանող երկրներ են: Ապրիլի վերջին Թեհրան ժամանեց Ուրուգվայի փոխնախագահ Ռաուլ Ռոդրիգեսը: Ռոուհանիի հետ հանդիպման ժամանակ կարևորվեց տնտեսական ոլորտում, հատկապես մասնավոր սեկտորում գործակցության զարգացումը կողմերի միջև:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ
2016թ. ապրիլ

Հրայր Փաշայան[*]

Ապրիլին Արցախի Հանրապետության ներքաղաքական կյանքում սպասվում էին երկրի ապագայի համար կարևոր նշանակության երկու հիմնական քաղաքական գործընթացներ: Նախ՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի մարտի 21-ին ստորագրած հրամանագրով ստեղծվել էր նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով՝ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանի գլխավորությամբ: Հրամանագրի համաձայն՝ մասնագիտական հանձնաժողովին հանձնարարվել է մինչև 2016թ. մայիսի 1-ը նախագահին ներկայացնել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը և հայեցակարգին հավանություն տրվելուց հետո՝ մինչև 2016թ. սեպտեմբերի 10-ը, մշակել ու նախագահին ներկայացնել սահմանադրական բարեփոխումների նախագիծը: Երկրորդ կարևոր իրադարձությունը պայմանավորված էր ապրիլի 17-ին որոշ համայնքներում նշանակված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններով:

Արտաքին քաղաքականության բնագավառում իրականացվելիք հիմնական քայլերը միտված էին Ղարաբաղյան հակամարտության ընթացիկ կարգավորման հարցերին, որոնց մի մասն ուղղված էր միջազգային հանրության շրջանակներում հիմնախնդրի իրական կերպարի ներկայացմանն ու Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանը:

Ադրբեջանա-ղարաբաղյան քառօրյա պատերազմը

Արցախի Հանրապետության ապրիլ ամսվա ներքին և արտաքին քաղաքական իրադարձությունների օրակարգը գրեթե ամբողջությամբ փոփոխության ենթարկվեց՝ պայմանավորված Ադրբեջանի Հանրապետության կողմից երկ-

[*] Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու:

րին սպառնացող ուղղակի ռազմական ներխուժման վտանգով: Կոպտորեն խախտելով 1994թ. մայիսի 12-ին ձեռք բերված կրակի դադարեցման եռակողմ (Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջանի Հանրապետություն-Հայաստանի Հանրապետություն) համաձայնագիրը և Ղարաբաղյան հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու միջազգային պարտավորվածությունները՝ ադրբեջանական կողմն ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը, ժամը 3.00-ի սահմաններում նախահարձակ ռազմական գործողություններ սկսեց հակամարտ զորքերի սահմանագծի ողջ երկայնքով:

Ռազմական գործողությունները մեկնարկեցին իսլամիստ ծայրահեղականների և Թուրքիայում պատրաստված հատուկջոկատայինների՝ Պաշտպանության բանակի դիրքեր դիվերսիոն ներթափանցմամբ, որոնց հաջողվեց հրետանու, ծանր զրահատեխնիկայի և օդուժի աջակցությամբ դիրքային որոշակի հաջողություններ արձանագրել ԼՂՀ հյուսիսային և հարավային ուղղություններում: Սակայն Հայրենիքի մերօրյա պաշտպանները սառնասրտորեն դիմակայեցին մինչև ատամները զինված հակառակորդին: Ծավալվեցին արյունահեղ մարտեր ամեն մի թիզ հողի համար: Ժամկետային զինծառայողներն իրենց հմտավարժ սպաների հրամանատարությամբ արիաբար կանգնեցին մինչև վերջ և հանդես բերեցին հերոսության անկրկնելի օրինակներ: Մարտական գործողություններն առավել թեժ էին ռազմաճակատի վերածված սահմանագծի հարավային՝ Հադրութի և հյուսիսային՝ Մարտակերտի ուղղություններում:

Աստիճանաբար մեծացնելով կիրառվող զինատեսակների տրամաչափը՝ ադրբեջանական կողմն ապրիլի 4-5-ը հայ դիրքապահների ուղղությամբ կիրառեց զանգվածային ոչնչացման «SOU» և «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր, ընդլայնեց իսրայելական արտադրության գերժամանակակից «Հարոփ» հարվածային անօդաչու թռչող սարքերի (այս կամիկաձե ԱԹՍ-ներն առաջին անգամ կիրառվեցին Արցախյան ռազմաճակատում) և այլ ժամանակակից զինտեխնիկայի օգտագործումը: Նոր տեսակի բարձրտեխնոլոգիական զինատեսակներով ռազմագործողությունները վերլուծաբաններին իրավամբ հիմք տվեցին քառօրյա պատերազմն անվանել թշնամու կողմից Արցախի դեմ մղված 6-րդ սերնդի պատերազմ:

Համազգային միասնությունը՝ Արցախին սպառնացող փորձությունը պատվով հաղթահարելու նախապայման

Հայրենյաց պաշտպանների դիրքերում իրականացրած հմուտ, անձնազոհ և հերոսական գործողությունների շնորհիվ կասեցվեց հակառակորդի հետագա առաջխաղացումը, իսկ նրան օգնության հասած ռեզերվային ուժերի, այդ թվում նաև պահեստազորայինների ու կամավորականների և հրետանու ճշգրիտ հարվածների շնորհիվ հնարավոր դարձավ ոչ միայն ձախողել Բաքվի ղեկավարության նենգ մտադրությունները, այլև այնպիսի հուժկու հարված հասցնել, որ Ի.Ալիևն ստիպված էր հանդես գալ կրակի դադարեցման առաջարկով:

Ադրբեջանի մտադրությունները ձախողվեցին նաև ԼՂՀ-ի դեմ ձեռնարկված հոգեբանական, քարոզչական, տեղեկատվական և այլ ժամանակակից տերմինաբանությամբ հիբրիդային անվանումը ստացած պատերազմներում: Դրա վառ վկայությունը դարձան այդ օրերին հայ հասարակության մեջ տիրող մարտական բարձր ոգին, միասնությունն ու հակառակորդին ամեն գնով հաղթելու պատրաստակամությունը: Արցախի համար ստեղծված այդ ծանր իրավիճակում հազարավոր հայրենակիցներ Արցախից, ՀՀ-ից և Սփյուռքից, ինքնաբուխ կերպով՝ հայրենասիրական մղումներից դրդված, այցելում էին հայ զինվորներին, իրենց հետ տանելով առաջին անհրաժեշտության տարբեր տեսակի ապրանքներ՝ սնունդ, հագուստեղեն և կենցաղային պարագաներ, պատրաստակամություն հայտնում իրենց հնարավորությունների չափով աջակցելու և օգնություն ցուցաբերելու Արցախին: Այդ կապակցությամբ՝ թիկունքային և ինժեներական աշխատանքները Պաշտպանության բանակի հետ համադրելու համար ստեղծվեց օպերատիվ շտաբ, որը գլխավորեց ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը: Արտակարգ իրավիճակներում սահմանամերձ և հրետակոծման տակ գտնվող բնակավայրերի քաղաքացիների ժամանակավոր տարհանման մասին ընդունված որոշումների համաձայն՝ բնակչությանն աջակցություն ցուցաբերելու և սոցիալական որոշ խնդիրների լուծման նպատակով կառավարության աշխատակազմում նշանակվեցին պատասխանատուներ՝ կոնտակտային համապատասխան տվյալներով: Միաժամանակ բացվեցին հաշվեհամարներ, որոնց միջոցով ցանկացողներն իրենց դրամական ներդրումներն էին կատարում, որոնք ուղղվելու են Պաշտպանության բա-

նակի հետագա մարտունակության ամրապնդմանը: Ապրիլի 4-30-ն ընկած ժամանակահատվածում՝ շուրջ 5000 իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ընդհանուր առմամբ փոխանցվել է մոտ 4 միլիարդ դրամ, ներառյալ արտարժույթով փոխանցումները:

ԵԱՀԿ Մինսկի խմբի մաքոքային դիվանագիտությունը և հակամարտության կարգավորման հեռանկարները

Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության արդյունքում ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո երկու տասնամյակից ավելի ընթացող բանակցություններն այդպես էլ չբերեցին խաղաղ համաձայնագրի կնքման: Արդյունքում՝ բանակցությունները վերջին տարիներին՝ որպես այդպիսիք, փաստորեն Բաքվի կողմից տապալվեցին, և միջնորդների օրակարգում որպես հրամայական դրվեց լարվածության ու բռնության մակարդակի նվազեցման հարցը: Ավելին, խախտելով դիվանագիտական էթիկայի բոլոր նորմերը՝ մարտի վերջին ադրբեջանական կողմը հրաժարվեց Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպելուց: Նովրուզի տոնակատարությունների կապակցությամբ ունեցած իր ելույթում Ի.Ալիևը համանախագահներին անվանեց «սադրիչներ»՝ այն հիմնավորմամբ, որ նրանք առաջարկել են միջադեպերի հետաքննության մեխանիզմ ստեղծել, և որ նրանք դեմ են հակամարտության վերաբերյալ բանակցությունների ձևաչափի փոփոխությանը:

Այդուհանդերձ, քառօրյա պատերազմի ընթացքում ձախողվելով սեփական արկածախնդրության մեջ՝ ադրբեջանական կողմը ստիպված համաձայնեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային այցելությանը: Արդյունքում՝ Իգոր Պոպովը (ՌԴ), Պիեռ Անդրիոն (Ֆրանսիա), Ջեյմս Ուորլիքը (ԱՄՆ) և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրչիկը քառօրյա պատերազմին հաջորդող օրերին եղան Բաքվում, Ստեփանակերտում և Երևանում: Ապրիլի 7-ին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված լայնածավալ ռազմական գործողություններին առնչվող հարցեր: Նախագահը Բաքվի ուխտադրուժ ագրեսիան համարել է Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջաններում կայունության և խաղաղության դեմ ուղղված ամենամեծ վտանգներից մեկը՝ այն որակելով նաև քաղաքակիրթ հանրության համար

լուրջ մարտահրավեր: Բակո Սահակյանն ընդգծել է նաև, որ Արցախի Պաշտպանության բանակը կասեցնում և կասեցնելու է մեր հանրապետության անկախության, ինքնիշխանության և անվտանգության դեմ ուղղված ցանկացած ոտնձգություն՝ հավելելով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբից ակնկալում է կոշտ, հասցեական գնահատականներ ու քայլեր Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության կապակցությամբ:

Նույն օրը ՊԲ շտաբում պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը հանդիպել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին: Հանդիպմանը ՊԲ հրամանատարն անդրադարձել է հակամարտ զորքերի շփման գծում վերջին օրերին տեղ գտած զարգացումներին, ներկայացրել անհերքելի ապացույցներ ադրբեջանական ռազմական ագրեսիայի և ռազմական հանցագործությունների, մասնավորապես՝ խաղաղ ազգաբնակչության դեմ կատարված անմարդկային քայլերի վերաբերյալ: Համանախագահներն, իրենց հերթին, վերահաստատել են խաղաղ բանակցությունների ճանապարհով հիմնախնդիրը լուծելուն միտված քայլերի անհրաժեշտությունը և քննարկել այդ ուղղությամբ իրականացվելիք հետագա գործընթացների հեռանկարը:

Սակայն ադրբեջանական կողմը, շարունակելով իր ապակառուցողական քաղաքականությունը, նախ՝ ապրիլի 14-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում շրջանառության մեջ դրեց մի նամակ, որի նպատակն է միակողմանիորեն չեղարկել 1994թ. մայիսի 12-ին Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև ստորագրված զինադադարի համաձայնագիրը: Միաժամանակ, ադրբեջանական կողմի հրադադարի պահպանման բանավոր պայմանավորվածության կոպիտ խախտումները, մասնավորապես՝ ապրիլյան վերջին օրերին հայ դիրքապահների և խաղաղ բնակավայրերի հրետակոծությունն ներն ի ցույց դրեցին, որ պատերազմն ավարտված չէ, և ինչպես Մինսկի խմբի, այնպես էլ տարբեր երկրների քաղաքական գործիչների հակամարտության կարգավորմանն ուղղված դիվանագիտական ջանքերը դատապարտված են ձախողման: Ընդհանուր առմամբ, ապրիլն ավարտվեց ղարաբաղյան խնդրով բանակցությունների հետագա շարունակման մշուշոտ հեռանկարով: Ինչպես ՀՀ նախագահն այս մասին խոսեց *Bloomberg* գործակալությանը տված իր հարցազրույցում, հնարավոր չէ, որ մի տեղում ռազմական գործողություններ ընթանան, մյուս տեղում էլ բանակցություններ վարեն:

Միջազգային հանրության և լրատվամիջոցների անդրադարձը քառօրյա պատերազմին

Պետք է նկատել, որ Լեռնային Ղարաբաղում իրավիճակի սրմանն արձագանքեցին աշխարհի բազմաթիվ երկրների, մասնավորապես՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդ պետությունների ղեկավարները, ինչպես նաև միջազգային հեղինակավոր կազմակերպությունները: Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահներ Վլադիմիր Պուտինն ու Ֆրանսուա Օլանդը, ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին, ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունը, ԵԱՀԿ գործող նախագահ, Գերմանիայի արտգործնախարար Ֆրանկ-Վալտեր Շթայնմայերը, Մինսկի խմբի համանախագահների եռյակը և մյուսներն ափսոսանք են հայտնել լայնամասշտաբ ռազմական գործողությունների կապակցությամբ և հակամարտության կողմերին կոչ արել անհապաղ դադարեցնել կրակն ու զսպվածություն ցուցաբերել՝ թույլ չտալու համար մարդկային նոր կորուստներ: Բոլոր այս հայտարարությունների միջով անցնում էր ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման այլընտրանք չունենալու գաղափարը, որն, ինչ խոսք, միայն ու միայն ողջունել կարելի է:

Ադրբեջանի սանձազերծած ագրեսիան անուղղակիորեն նպաստեց նրան, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Այդ օրերին Արցախում տեղի ունեցող իրադարձությունները դարձան թոփ թեմա միջազգային այնպիսի լրատվական կայքերում և հեռուստատեսային ալիքներում, ինչպիսին են, օրինակ *Stratfor*-ը, *France 24*-ը, *BBC*-ն, *Euro News*-ը, *CNN*-ը, *Reuters*-ը, *New York Times*-ը, *Aljazeera*-ն և այլն: Հատկանշական է, որ միջազգային լրատվականներից շատերը տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանելու համար ԼՂՀ էին գործուղել իրենց թղթակիցներին, ովքեր այցելում էին առաջնագիծ, զրուցում զինծառայողների ու բնակիչների հետ, այցելում հիվանդանոցներ, որտեղ բուժում էին ստանում ագրեսիայից տուժած զինվորականներ, քաղաքացիական անձինք, այդ թվում նաև երեխաներ և ծերեր:

Այս համատեքստում մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ առաջատար լրատվամիջոցներն Արցախի վերաբերյալ պատրաստված իրենց տեսանյութերի մեծ մասում ադրբեջանական պաշտոնական տեսակետի կողքին ներկայացնում էին նաև պաշտոնական Ստեփանակերտի տեսակետը՝ զրուցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնյաների հետ: Դրանց

շարքում ամենաքննարկվածը *CNN*-ի լրատվական թողարկումն էր, որի ժամանակ ուղիղ կապ հաստատվեց Էլմար Մամեդյարովի և Կարեն Միրզոյանի հետ՝ որպես հակամարտության կողմերի արտգործնախարարներ: Արտերկրում գտնվող ԼՂՀ ներկայացուցիչներն այդ օրերին նույնպես միջազգային մամուլի ուշադրության կենտրոնում էին: Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանի Դաշնությունում, Ավստրալիայում և այլ երկրներում Արցախի ներկայացուցիչները հնարավորություն ստացան իրենց տեսակետը հայտնել և բարձրաձայնել ադրբեջանական ագրեսիայի մասին այնպիսի հեղինակավոր մեդիա ընկերությունների եթերում, ինչպիսին են *France 24*-ը, *Aljazeera*-ն, *ABC News*-ը, *Sputnik*-ը, *Al-Masdar*-ը և այլն: Զուգահեռաբար առաջատար վերլուծական ընկերություններում տպագրվեցին բազմաթիվ վերլուծական հոդվածներ, որոնցում փորձ էր արված հասկանալ Ղարաբաղյան հակամարտության ակունքները, կողմերի դիրքորոշումները, ինչպես նաև լարվածության ներկայիս պատճառները: Դրանցում հիմնականում եզրակացվում է, որ որպես 1990-ականների սկզբին պատերազմում պարտված կողմ՝ հրադադարի խախտումն ավելի շատ բխում է Ադրբեջանի շահերից:

Տարբեր երկրների բազմաթիվ խորհրդարանականներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին ընդդեմ ադրբեջանական ագրեսիայի՝ հանդես գալով միասնական կոչերով, սոցիալական էջերում կատարելով գրառումներ, մասնակցելով տարբեր միջոցառումների և այլն: Օրինակ, Ֆրանսիայի խորհրդարանականներն իրենց *«Le Monde»* պարբերականում տպագրած միասնական հայտարարության մեջ անդրադարձան հետևյալ երկու կարևոր թեզերին. միջազգային հանրության անտարբերությունը հանգեցրեց ադրբեջանական կողմի ներկայիս ագրեսիային, և ադրբեջանական ագրեսիան ցույց տվեց, որ Արցախի ժողովուրդը երբեք չի կարող անվտանգ լինել Ադրբեջանի կազմում: 85 ԱՄՆ կոնգրեսականներ հանդես եկան կոչով՝ պահանջելով ԱՄՆ նախագահից աջակցել հակամարտության շրջանակներում կոնկրետ քայլերի իրականացմանը, ինչպես, օրինակ, սահմաններին հետաքննության մեխանիզմների տեղադրում, դիպուկահարների դուրսբերում և այլն: Այս քայլերն աջակցություն են ստացել Արցախի և Հայաստանի կողմից, սակայն մերժվել են Ադրբեջանի կողմից, ինչը, ըստ կոնգրեսականների, ապացուցում է Ադրբեջանի՝ հակամարտության ագրեսիվ կողմ լինելու փաստը:

Հայկական Սփյուռքը նույնպես իր ներդրումն ունեցավ վերջին օրերին Արցախի ճանաչելիության բարձրացման հարցում: ԱՄՆ-ում, Ավստրալիայում, եվրոպական և արաբական մի շարք երկրներում սփյուռքահայերը կազմակերպեցին բողոքի ակցիաներ՝ հանդես գալով «Արցախ» գրառումը կրող տարբեր պաստառներով և արտահայտելով իրենց բողոքի ձայնն ընդդեմ Ադրբեջանի ագրեսիայի:

Արտաքին հիմնական իրադարձությունների տեսություն

Քառօրյա պատերազմն առիթ դարձավ ինչպես ՀՀ-ԼՂՀ-Սփյուռք հարաբերությունների հետագա խորացման, այնպես էլ տարբեր երկրների խորհրդարանականների Արցախ այցելության և Ղարաբաղյան հակամարտությունը տարբեր ձևաչափերում քննարկելու համար: Այս համատեքստում նորից հանրային օրակարգ մտավ ՀՀ-ի կողմից ԼՂՀ ճանաչման հարցը: Այն քննարկվեց նաև ՀՀ նախագահի ապրիլի 2-ին հրավիրած Ազգային անվտանգության խորհրդի նիստում: Սերժ Սարգսյանը հանձնարարեց արտաքին գործերի նախարարությանը համագործակցել Լեռնային Ղարաբաղի արտաքին գործերի նախարարության հետ և աշխատել Լեռնային Ղարաբաղի հետ ռազմական փոխօգնության պայմանագիր կնքելու ուղղությամբ:

Արցախին աջակցություն ցուցաբերելու նպատակով ՀՀ-ից և Սփյուռքից բազմաթիվ հասարակական, քաղաքական գործիչներ այցելեցին Արցախ: Հատկապես առավել ակտիվ էին ՀՀ ԱԺ պատգամավորները, խմբակցությունների ղեկավարներն ու կուսակցությունների առաջնորդները, ովքեր, մի կողմ թողնելով ներքաղաքական հակասությունները, Արցախ ժամանելով պատրաստակամություն էին հայտնում իրենց ուժերը ներդնել ծառացած հիմնախնդիրները լուծելու նպատակով: Այս համատեքստում ապրիլի 12-ին ԼՂՀ Ազգային ժողովի նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ ԼՂՀ ԱԺ - ՀՀ ԱԺ միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի ընդլայնված կազմով հանդիպումը, որի ընթացքում ելույթ ունեցան ԼՂՀ-ի և ՀՀ-ի շուրջ երկու տասնյակ պատգամավորներ: Քննարկվեց պաշտպանության, անվտանգության և արտաքին քաղաքականության ոլորտներում օրենսդրական և այլ կարգի համագործակցության ու միջազգային խորհրդարանական հարթակներում Արցախին առնչվող խնդիրների համակողմանի ներկայացման հետ կապված հարցերի լայն շրջանակ: Ընդգծվել է, որ նման ձևաչափով քննար-

կումները կարևոր են՝ ստեղծված ոչ սովորական պայմաններում գտնելու արդյունավետ համագործակցության համար պահանջվող գործիքակազմ:

Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ռազմական գործողություններին և դրանց հետևանքով ստեղծված իրավիճակին առնչվող խնդիրներն էին ընկած ապրիլի 4-ին Մերձդնեստրյան, իսկ ապրիլի 6-ին Աբխազիայի Հանրապետության ու Հարավային Օսիայի Հանրապետության կողմերի նախաձեռնությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանի, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Վիտալի Իգնատևի, Աբխազիայի և ՀՕՀ ԱԳՆ ղեկավարներ Վյաչեսլավ Չիրիբկայի և Կազբուլատ Ցխովրեբովի միջև տեղի ունեցած հեռախոսազրույցների հիմքում: Զրույցի ընթացքում հիշյալ երկրների ԱԳՆ ղեկավարները իշխանությունների և ժողովրդի անունից լիակատար աջակցություն և զորակցություն են հայտնել Արցախին և հույս հայտնել, որ սեղմ ժամկետներում հնարավոր կլինի կայունացնել իրավիճակը: Կողմերը համոզմունք են հայտնել, որ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունը հնարավոր է լուծել բացառապես խաղաղ ճանապարհով:

Արտաքին քաղաքականության իրադարձություններից կարելի է առանձնացնել Բասկերի երկրի խորհրդարանի ապրիլի 14-ին ընդունած հայտարարությունը՝ ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ռազմական գոծողությունների վերաբերյալ և ապրիլի 20-ին ԱՄՆ Հավայներ նահանգի Հոնոլուլու շրջանի և քաղաքի խորհրդի ընդունած բանաձևը: Հակիրճ ներկայացնելով հակամարտության պատմական զարգացման ընթացքը և բացառելով ուժի կիրառմամբ հիմնախնդրի լուծումը՝ Բասկերի խորհրդարանը հայտարարության մեջ կարևորեց կողմերի երկխոսությունը, տվյալ բնակչության մեծամասնության կամքի հարգումը, որը պետք է արտահայտվի ժողովրդավարական կերպով և առանց որևէ ճնշման, խրախուսեց ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ բանակցային գործընթացին վերադառնալու անհրաժեշտությունը, որին Լեռնային Ղարաբաղը պետք է ունենա իր մասնակցությունը: ԱՄՆ Հավայներ նահանգի Հոնոլուլու շրջանի և քաղաքի խորհուրդը 16-78, *CDI* բանաձևով մասնավորապես քաջալերում է և սատարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շարունակական ջանքերին՝ երաշխավորելու իր քաղաքացիների այն իրավունքները, որոնք բնորոշ են ազատ և անկախ հասարակությանը, և կոչ է անում ԱՄՆ նախագահին և Կոնգրեսին սատարել մի-

ջազգային հանրության ջանքերին՝ ուղղված Հարավային Կովկասի տարածաշրջանում անվտանգության հարցերի արդար և երկարատև լուծմանը: Հարկ է նշել, որ մինչ այդ՝ մարտի վերջին, ԱՄՆ Հավայներ նահանգի Ներկայացուցիչների պալատի կողմից ընդունվել է ԼՂՀ ճանաչման բանաձև՝ դառնալով Արցախի Հանրապետության անկախությունը ճանաչած ԱՄՆ 7-րդ նահանգը:

Հայոց կաթողիկոսներն ապրիլի 13-14-ը Արցախ կատարեցին պատմական այցելություն: Արցախ առաջին անգամ ոտք դնող Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն իր խոսքում շեշտեց, որ եկել են աշխարհին հիշեցնելու՝ Ղարաբաղը մերն էր, մերն է ու մերն էլ պետք է լինի: «Անկախացած երկրում նորից պատերազմ տեսած բնակչությանը հույս ու հավատ ենք բերել Մայր Աթոռից»,- իր խոսքում շեշտեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն: Հայոց եկեղեցու երկու հայրապետները Գանձասարի բարձունքից, Շուշիից ու մյուս եկեղեցիներից իրենց աղոթքը հղեցին առ Աստված, օրհնեցին մեր քաջարի զինվորներին՝ գլուխ խոնարհելով նրանց առաջ: ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ հանդիպման ընթացքում ուշադրության կենտրոնում էին պատերազմական գործողությունների և դրանց հետևանքներին վերաբերող հարցեր: Քննարկվեց նաև պետություն-եկեղեցի, Հայրենիք-Սփյուռք կապերին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Բավական հագեցած էր նաև ապրիլի 18-20-ը աշխատանքային այցով Արցախ ժամանած ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի օրակարգը: Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը ՀՀ նախագահի հետ միասին անց է կացրել մի շարք խորհրդակցություններ Պաշտպանության բանակի բարձրագույն սպայակազմի, օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ներկայացուցիչների միջև: Քննարկվել են Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով հանրապետությունում ստեղծված իրավիճակին վերաբերող հարցեր: ԼՂՀ նախագահը բարձր է գնահատել այս ծանր օրերին Մայր Հայաստանի և Սփյուռքի աջակցությունն Արցախին և համայն հայության համախմբումն ու միասնականությունը՝ այն համարելով մեր բոլոր հաղթանակների հիմնական գրավականներից մեկը: Ապրիլի 19-ին հայկական զույգ պետությունների ղեկավարներն այցելել են Պաշտպանության բանակի զորամասերից մեկը և ապրիլի 2-5-ը հակառակորդի սանձազերծած լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության ու խիզախության համար պետական պարգևներ հանձնել մի

խումբ զինծառայողների: Այնուհետև ԼՂՀ և ՀՀ նախագահները, երկու հայկական հանրապետությունների պաշտպանության նախարարների և բարձրաստիճան սպաների ուղեկցությամբ, այցելել են Արցախի Հանրապետության հյուսիսարևելյան և հարավային հատվածներում տեղակայված մի շարք զորամասեր և հրամանատարական կազմի հետ անցկացրած խորհրդակցությունում քննարկել տիրող իրավիճակին ու զինվորների ծառայության ընթացքին վերաբերող հարցեր:

Քառօրյա պատերազմից հետո ստեղծված իրավիճակին տեղում ծանոթանալու և Արցախի Հանրապետությանը սատարելու նպատակով ապրիլին ժամանեցին եվրոպական մի շարք երկրների խորհրդարանականներ: Տարբեր օրերի Արցախ ժամանած Հունաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր, Հունաստան-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Գարիֆալիա Կանելին, Լատվիայի Հանրապետության Սեյմի պատգամավոր, Լատվիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Սերգեյ Պոտապկինը, Եվրոպական խորհրդարանի չեխ պատգամավոր Յարոմիր Շտետինան, Հունաստանի Համապոնտական դաշնության պատվիրակությունը՝ կառույցի ղեկավար Խրիստոս Դմիտրիոս Տոպալիդիսի գլխավորությամբ, Եվրոպական խորհրդարանի Արցախի հետ աշխատող խմբի ղեկավար Ֆրանկ Էնգելը ընդունելության են արժանացել ԼՂՀ նախագահի, ԱԺ նախագահի և ԱԳՆ ղեկավարի կողմից: Հանդիպումների ընթացքում հյուրերի խնդրանքով ներկայացվել է ապրիլի 2-5-ը ղարաբաղա-ադրբեջանական սահմանին ծավալված ռազմական գործողությունների նկարագիրը, անդրադարձ է կատարվել դրանց հետևանքներին:

Ղարաբաղյան հակամարտությունը քննարկման առարկա դարձավ նաև Եվրախորհրդարանի ապրիլի 12-ի լիագումար նիստում: Եվրոպական պատգամավորների ելույթների առանցքում այն միտքն էր, որ Արցախի ժողովուրդն իր ազգային ազատագրական պայքարի շնորհիվ փրկվել է մի նոր ցեղասպանությունից, հետևաբար միջազգային հանրությունը պետք է հաշվի նստի այս իրողության հետ և արցախցիների խաղաղ գոյատևման երաշխիքներ ապահովի: Հնչեցին ԼՂՀ անկախության ճանաչման մասին կոչեր՝ այն հիմնավորմամբ, որ Ադրբեջանը մնացել է նույն ագրեսոր պետությունը, ինչ 20 տարի առաջ էր:

Ապրիլի 19-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) 44 պատվիրակների ստորագրությամբ գրավոր հռչակագիր ընդունեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ: Փաստաթղթում, մասնավորապես, ասված է. «Լինելով համոզված, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծումը չունի այլընտրանք, Խորհրդարանական վեհաժողովը վերահաստատում է իր շարունակական աջակցությունը միջազգայնորեն համաձայնեցված միակ միջնորդական ձևաչափի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ հասնելու այս հակամարտության տևական և արդար կարգավորման: Հետևաբար, մենք հորդորում ենք հարգել Մինսկի խմբի համանախագահների շարունակական կոչերը՝ չխաթարելու իրենց մանդատը և չբարդացնելու ընթացող բանակցությունները: ...Հրադադարի խախտումների հետաքննության մեխանիզմի ստեղծումը, ինչպես նաև Մինսկի խմբի համանախագահների՝ վստահության ամրապնդման միջոցառումների և 1994թ. զինադադարի համաձայնագրի ամրապնդման վերաբերյալ այլ առաջարկությունները կնպաստեն լարվածության նվազմանն ու խաղաղ բանակցությունների առաջմղման համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելուն»:

Տեղեկատվական անվտանգություն

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՒՂԵԿՑՈՂ ԿԻԲԵՌՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ

Սամվել Մարտիրոսյան[*]

Ապրիլի 2-ին սկսված պատերազմական գործողություններն Արցախի սահմաններում ուղեկցվում էին նաև մի շարք կիբեռհարձակողական և պաշտպանողական գործողություններով, որոնք իրականացվում էին երկու կողմի հաքերային խմբերի կողմից:

Հայ-ադրբեջանական կիբեռհակամարտությունն ընթանում է դեռևս 2000թ., երբ արձանագրվել էր առաջին մեծ ընդհարումը հայկական և ադրբեջանական հաքերային խմբավորումների միջև[1]: Դրանից հետո երկար տարիներ ձևավորվում էին երկու կողմերի կիբեռխմբավորումները, որոնք իրականացնում էին աստիճանաբար ավելի բարդացող և զանգվածային հարձակումներ:

Կարելի էր ենթադրել, որ ապրիլյան հարձակմանը կուղեկցեն նաև ուժեղ կիբեռգրոհներ: Սակայն այդ օրերի կիբեռհարձակումներում *DDoS* տիպի հարձակումներ արձանագրվում էին երկու կողմից էլ: Սակայն եթե 2012-2014թթ. Հայաստանի վրա արձանագրվել էին այնպիսի հարձակումներ, որոնք հանգեցրել էին ոչ միայն մի շարք պետական և լրատվական կայքերի աշխատանքի բավական երկարաժամկետ[2] խափանման, ապա ապրիլյան պատերազմական գործողությունների ժամանակ նման ակտիվություն չնկատվեց: Երկու կողմից էլ նկատվում էին կիբեռհարձակումներ, սակայն դրանց ուժգնությունը բավական ցածր էր՝ ռազմաճակատում իրական գործողությունների համեմատ:

Արդեն ապրիլի 2-ից հայաստանյան լրատվական և պետական կայքերի վրա սկսվեցին ուղղորդված *DDoS* տիպի հարձակումներ[3]: Դրան զուգահեռ՝ նկատվում էր կայքերի այցելուների աննախադեպ աճ՝ պայմանավորված բնակ-

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:
[1] КАРАБАХСКИЕ WEB-БАТАЛИИ, http://soob.ru/n/2000/5/i/10
[2] DDOS ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՄՏԱՀՈԳԻՉ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12704
[3] Razm.info կայքը DDoS հարձակման է ենթարկվել, http://sputnik.co.am/armenia/20160402/2694038.html

չության հետաքրքրվածությամբ[4]: Այս երկու գործոնները միասին հանգեցրին մի շարք կայքերի աշխատանքի պարբերական խաթարումների: Իրավիճակը բավական արագ դարձավ վերահսկելի, երբ Հայաստանում լրատվական կայքերի մեծ մասն անցավ *DDoS* հարձակումներից պաշտպանողական միջոցների[5]:

Ադրբեջանական հաքերային խմբերին ապրիլի 2-ին միացան նաև թուրքական ազգայնական հաքերները *THT* (*TurkHackTeam*) թիմից (այս թիմը հայտնի է Վատիկանի կայքերի վրա հարձակումով Հռոմի պապի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հայտարարությունից հետո[6]): Այս խումբը հայտարարեց հատուկ Հայաստանի դեմ ուղղված գործողության մասին: Խումբը հայտարարեց, որ իրենց հաջողվել է արգելափակել մի շարք հայաստանյան պետական կայքերի աշխատանքը[7]: Սակայն մշտադիտարկումը ցույց տվեց, որ խումբը որպես լուրջ հարձակումներ փորձում էր ներկայացնել կայքերի աշխատանքի շատ կարճաժամկետ խաթարումը:

Ապրիլի 6-ին մեկ այլ թուրքական հաքերային խումբ՝ *Aslan Neferler Tim* անվանմամբ, հայտարարեց հայաստանյան պետական կայքերի վրա հարձակման մասին[8]: Սակայն այս ընթացքում կայքերի աշխատանքի խափանում չնկատվեց:

Հայկական հաքերային խմբերը նույնպես իրականացրին մի շարք հարձակումներ ադրբեջանական թիրախների վրա: *Monte Melkonian Cyber Army*-ն իրականացրեց *DDoS* հարձակում ադրբեջանական մի շարք լրատվական կայքերի վրա: Նաև հարձակման ենթարկվեց Ադրբեջանի կառավարության կայքը[9]: Հաքերային թիմը համացանցում նաև բաց տեղադրեց Ադրբեջանի 25.000 քաղաքացիների տվյալներ, որոնց մեծ մասը պատկանում էր զինվորականների: Այս միջադեպը նույնիսկ գնահատվեց որպես ապրիլի ընթացքում կիբեռանվտանգությանը վերաբերող ամենալուրջ միջադեպերից մեկը՝ Պանամայի օֆշորի և Թուրքիայի քաղաքացիների անձնական տվյալների արտահոսքերի հետ մեկտեղ[10]:

Չնայած հարձակումների մեծ քանակին՝ ապրիլյան դեպքերը հայ-ադրբեջանական կիբեռհակամարտության ամենաթեժ պահեր անվանել չի կարելի:

[4] Հայաստանյան որոշ կայքերի խափանումը DDoS հարձակումների արդյունք է. Փորձագետ, http://www.tert.am/am/news/2016/04/02/DDos-attacks-armenia/1982078

[5] Հիմնականում կայքերն օգտվում էին Cloudflare ընկերության ծառայություններից:

[6] Hackers Shut Down Vatican City Website Against Pope's Comment, https://www.hackread.com/hackers-shut-down-vatican-city-website/

[7] THT Armenian Operation, http://pastebin.com/AbswZfw9

[8] Turkish hackers attack Armenian government websites, https://www.rt.com/news/338682-turkish-hackers-armenian-websites/

[9] Հայ հաքերները կոտրել են ադրբեջանական պաշտոնական կայքերը: Նյութի աղբյուրը՝ http://news-book.am/?p=79439/hay+haqernery+kotrel+en+adrbejanakan+pashtonakan+kayqery+lusankarner&l=am

[10] Top-10 security incidents in April 2016, https://www.cybersecurity-help.cz/blog/100.html

Հայաստանը վարկանիշային համակարգում

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԸ» 2012-2016ԹԹ.

Վարկանիշային համեմատական վերլուծություն

The Heritage Foundation, The Wall Street Journal. "Index of Economic Freedom"

Կարեն Վերանյան[*]

«Տնտեսական ազատության ինդեքսը». մեթոդաբանական հարցեր

«Տնտեսական ազատության ինդեքսը»/*Index of Economic Freedom* վարկանիշային հետազոտությունն արդեն գրեթե մեկ տասնամյակ իրականացվում է ԱՄՆ հեղինակավոր «ուղեղային կենտրոններից» մեկի՝ «Հերիթիջ ֆաունդեյշընն»-ի/*The Heritage Foundation* և «Ուոլ սթրիթ ջորնըլ»/*The Wall Street Journal* օրաթերթի կողմից: Նշենք, որ «Հերիթիջ ֆաունդեյշընն» կազմակերպությունը ստեղծվել է 1973թ., հետազոտական, կրթական ինստիտուտ է («ուղեղային կենտրոն»), որի հիմնական նպատակներից են ԱՄՆ կառավարական պահպանողական քաղաքականության ձևավորումն ու աջակցումը:

«Տնտեսական ազատության ինդեքսը» վարկանիշային հետազոտության մեթոդաբանությունը հիմնվում է 10 տնտեսական ցուցիչների վրա, որոնց քանակական միջինացված հաշվարկի միջոցով տրվում է զեկույցում ներառված երկրներից յուրաքանչյուրի տնտեսական ազատության ամփոփիչ վարկանիշը:

Ստորև ներկայացվում են «Տնտեսական ազատության ինդեքսի» 10 ցուցիչները.

1. սեփականության իրավունքի պաշտպանվածություն,
2. ազատությունը կոռուպցիայից,
3. ֆիսկալ ազատություն,
4. կառավարության ծախքեր,
5. գործարար ազատություն,
6. աշխատանքային ազատություն,

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ:

7. արժութային ազատություն,
8. առևտրի ազատություն,
9. ներդրումային ազատություն,
10. ֆինանսական ազատություն:

Նշենք նաև, որ վերը թվարկված յուրաքանչյուր ցուցչի տնտեսական համապատասխան ազատության ցուցանիշը և ընդհանրապես տվյալ երկրի տնտեսական ազատության ամփոփ ցուցիչը սահմանվում է 0-100 միավոր սանդղակով, որտեղ 100 միավորը համարվում է ազատության բարձրագույն ցուցանիշը: Բացի այդ, յուրաքանչյուր պետության տնտեսական ազատության ամփոփիչ ցուցչային վարկանիշը, համաձայն տվյալ երկրի տնտեսության ազատականացման աստիճանավորման, բաշխվել է հետևյալ կերպ.

1. ազատ (երկրներ, որոնք ստացել են 80-100 միավոր,
2. հիմնականում ազատ (70-79.9),
3. միջին ազատության (60-69.9),
4. հիմնականում ոչ ազատ (50-59.9),
5. ճնշված (0-49.9):

Հայաստանը 2012-2016թթ. ԱՊՀ անդամ պետությունների ցուցակում տնտեսապես ամենաազատականացված երկիրն է

Վարկանիշային 2012թ. հետազոտությունում Հայաստանն զբաղեցրել է առաջատար դիրքը ԱՊՀ տարածքում՝ 39-րդ հորիզոնական, 68.8 միավոր: Հարավկովկասյան երկրների համեմատության համատեքստում լավագույն ցուցանիշը Վրաստանինն է՝ 34-րդ դիրք: Հայաստանն իր ցուցանիշով տեղակայվել է *միջին ազատության* աստիճանակարգում և իր վարկանիշով գերազանցում է այնպիսի երկրների, ինչպիսիք են Նորվեգիան, Հունգարիան, Ֆրանսիան և այլն: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինս 58.9 միավորով տեղակայվել է *հիմնականում ոչ ազատ* երկրների ցուցակում:

Աղյուսակ 1

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2012թ., ՀՀ վարկանիշն այլ երկրների շարքում

Դիրքը	Երկիրը	Ամփոփ ցուցիչ	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ												
39	Հայաստան	**68.8**	30	26	89.3	74.9	87.8	76.6	73.1	85.4	75	70
88	Ղրղզստան	**60.2**	20	20	93.1	66.5	74.1	88.9	71	63.2	55	50
65	Ղազախստան	**63.6**	40	29	90.4	83.4	72.9	88.7	71.8	79.6	30	50
91	Ադրբեջան	**58.9**	20	24	84.9	63.7	68.6	81.6	74.5	77.2	55	40
124	Մոլդովա	**54.4**	40	29	86.5	38.7	70	41.7	74.4	79	35	50
129	Տաջիկստան	**53.4**	20	21	89	75.5	61.6	56.8	67.4	82.5	20	40
144	Ռուսաստան	**50.5**	25	21	82.5	48.6	65.1	63.5	66.3	68.2	25	40
164	Ուզբեկստան	**45.8**	15	16	94.4	64.9	67.6	60.1	64.2	66.1	0	10
163	Ուկրաինա	**46.1**	30	24	78.2	29.4	46.2	51.2	67.7	84.4	20	30
153	Բելառուս	**49**	20	25	86.6	34.9	71.3	77	65.3	80.4	20	10
168	Թուրքմենստան	**43.8**	10	16	98.4	93.5	30	30	71	79.2	0	10
Այլ երկրներ												
73	Թուրքիա	**62.5**	50	44	77.7	58.5	67.1	40	71.9	85.4	70	60
34	Վրաստան	**69.4**	40	38	87.8	55.8	86.9	92.1	74.4	89.2	70	60

Աղբյուրը՝ Հերիթիջ ֆաունդեյշընն. «Տնտեսական ազատության ինդեքսը» 2012թ.

Կազմակերպության 2013թ. վարկանիշային զեկույցի տվյալներով՝ Հայաստանը պահպանել է առաջատարի ցուցանիշը ԱՊՀ երկրների շարքում՝ 69.4 միավորով զբաղեցնելով 38-րդ հորիզոնականը: Նախորդ զեկույցի համադրությամբ մեր երկիրը բարելավել է միավորը 0.6-ով՝ նախկին 39-րդ դիրքից անցում կատարելով 38-րդի: Հայաստանին հաջորդում են Ղազախստանն ու Ադրբեջանը, որոնք համապատասխանաբար գտնվում են 68 և 88-րդ հորիզոնականներում: Դրական տեղաշարժ է նկատվում նաև Ադրբեջանի ցուցանիշում, որը նախորդ զեկույցի 91-րդ դիրքից տեղափոխվել է 88-րդ հորիզոնական: Նկատենք, որ չնայած Ադրբեջանը ԱՊՀ երկրների ցուցակում զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը, սակայն դիրքային միավորով ավելի քան կրկնակի զիջում է ՀՀ համապատասխան ցուցանիշին: Ավելին, զգալի է նաև ԱՊՀ երկրների շարքում 2-րդ հորիզոնականը զբաղեցրած Ղազախստանի և Հայաստանի դիրքային տարբերությունը (տե՛ս *Աղյուսակ 2*):

Հարավկովկասյան երկրներից լավագույն արդյունքը կրկին գրանցվել է Վրաստանի պարագայում, որն այս զեկույցում բարելավելով նախորդ արդյունքը՝ գտնվում է 21-րդ դիրքում: Հիշեցնենք, որ 2012թ. տարեկան զեկույցում Վրաստանը 34-րդն էր:

Հայաստանն իր վարկանիշային ցուցանիշով համարվում է *միջին ազատության* երկիր՝ 69.4 միավորով գտնվելով *միջին ազատ* և *հիմնականում ազատ* երկրների սահմանագծում: Վրաստանը 2-րդ աստիճանակարգում է՝ *հիմնականում ազատ* տնտեսությամբ երկիր: Ինչ վերաբերում է հարավկովկասյան մյուս հանրապետությանը, ապա Ադրբեջանը, ինչպես և 2012թ. զեկույցում, համարվում է *հիմնականում ոչ ազատ* երկիր:

2014թ. վարկանիշային զեկույցում ԱՊՀ երկրների ցանկում Հայաստանն իր վարկանիշային միավորով (68.9) կրկին համարվում է ԱՊՀ տարածքում տնտեսապես ամենաազատականացված պետությունը (41-րդ հորիզոնական): Պետք է նկատել, որ 2013թ. համեմատությամբ ԱՊՀ անդամ երկրներից վարկանիշային ամփոփ միավորների հաշվարկով բացասական միտում է նկատվել միայն 3 երկրների՝ Հայաստանի (-0.5 միավորով), Տաջիկստանի և Թուրքմենստանի պարագաներում: Եթե Հայաստանը նախորդ զեկույցում գտնվում էր 38-րդ հորիզոնականում՝ 69.4 ամփոփ միավորով, ապա 2014թ. զբաղեցրել է 41-րդ հորիզոնականը՝ 68.9 միավորով: 2013թ. համեմատությամբ

1.6 ամփոփ միավորի տեղաշարժ է գրանցել Ադրբեջանը՝ զբաղեցնելով 81-րդ դիրքը՝ 61.3 միավորով: Հարավկովկասյան երկրներից շարունակում է առաջատար դիրք պահպանել Վրաստանը:

2015թ. զեկույցում մեր երկիրը գտնվում է 52-րդ դիրքում՝ 67,1 ամփոփ միավորով: Հայաստանին հաջորդում են Ղազախստանն ու Ղրղզստանը: Դիրքային հետընթաց է ունեցել նաև Ադրբեջանը (85-րդ դիրք): Հարավային Կովկասի երկրների շարքում լավագույն ցուցանիշը կրկին Վրաստանինն է:

2016թ. վարկանիշային զեկույցում Հայաստանը կրկին համարվում է ԱՊՀ երկրների շարքում ամենաազատականացված տնտեսություն ունեցող երկիրը. նախորդ տարվա համեմատ՝ 2 դիրքային միավորի հետընթաց և 54-րդ դիրք: Զգալի դիրքային նահանջ է արձանագրվել հատկապես Ադրբեջանի պարագայում, որը 2015թ. 85-րդ դիրքից 2016թ. զեկույցում տեղափոխվել է 91-րդ հորիզոնական՝ նախորդ տարվա համեմատ ունենալով -0,8 դիրքային տեղաշարժ:

Աղյուսակ 2

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2013թ., ՀՀ վարկանիշն այլ երկրների շարքում

Դիրքը	Երկիրը	Ամփոփ ցուցիչ	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ												
38	Հայաստան	**69.4**	30	26	88	82.1	87.6	77.1	73	85.4	75	70
68	Ղազախստան	**63**	35	27	93.2	84.5	71.8	88.4	72.2	78.2	30	50
88	Ադրբեջան	**59.7**	25	24	85.5	67.8	69.2	79.4	73.5	77.2	55	40
89	Ղրղզստան	**59.6**	20	21	94.8	56.4	73.2	88.6	66.7	75.4	50	50
115	Մոլդովա	**55.5**	40	29	87.2	50.1	69.7	40.9	73.4	80	35	50
131	Տաջիկստան	**53.4**	20	23	92.8	78.1	61.7	55.5	64.6	78.2	20	40
139	Ռուսաստան	**51.1**	25	24	86.9	54.4	69.2	52.6	66.7	77.4	25	30
154	Բելառուս	**48**	20	24	88.8	43.5	75.2	76.9	40.7	80.8	20	10
161	Ուկրաինա	**46.3**	30	23	78.2	29.4	47.6	49.9	71	84.4	20	30
162	Ուզբեկստան	**46**	15	16	90.2	67.8	71.2	61	63	66.1	0	10
169	Թուրքմենստան	**42.6**	5	16	94	91.7	30	30	70.6	79.2	0	10
Այլ երկրներ												
69	Թուրքիա	**62.9**	50	42	77	64.9	68.2	43.1	73.3	85.2	65	60
21	Վրաստան	**72.2**	45	41	88.2	68.9	90.6	91.1	72.6	89.2	75	60

Աղբյուրը՝ Հերիթիջ ֆաունդեյշընն. «Տնտեսական ազատության ինդեքսը» 2013թ.

Աղյուսակ 3

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2015թ., ՀՀ վարկանիշն այլ երկրների շարքում

Դիրքը	Երկիրը	Ամփոփ ցուցիչ	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ												
52	Հայաստան	**67.1**	20.0	36.0	84.4	82.8	82.7	64.3	70.6	85.4	75.0	70.0
69	Ղազախստան	**63.3**	25.0	26.0	93.2	85.0	73.7	87.0	74.6	79.0	40.0	50.0
82	Ղրղզստան	**61.3**	20.0	24.0	93.6	53.2	73.7	85.0	73.8	80.2	60.0	50.0
85	Ադրբեջան	**61.0**	20.0	28.0	88.1	59.7	74.5	79.1	79.8	76.0	55.0	50.0
111	Մոլդովա	**57.5**	40.0	35.0	85.1	51.8	66.8	40.6	76.1	79.8	50.0	50.0
140	Տաջիկստան	**52.7**	20.0	22.0	92.1	81.9	65.4	46.4	69.6	74.6	25.0	30.0
143	Ռուսաստան	**52.1**	20.0	28.0	86.1	57.8	76.3	58.9	63.9	75.0	25.0	30.0
153	Բելառուս	**49.8**	20.0	29.0	86.4	54.7	72.0	80.1	44.5	81.0	20.0	10.0
160	Ուզբեկստան	**47.0**	15.0	17.0	90.2	67.3	73.1	64.2	63.5	69.8	—	10.0
162	Ուկրաինա	**46.9**	20.0	25.0	78.7	28.0	59.3	48.2	78.6	85.8	15.0	30.0
172	Թուրքմենստան	**41.4**	5.0	17.0	94.0	93.5	30.0	20.0	64.2	80.0	—	10.0
Այլ երկրներ												
70	Թուրքիա	**63.2**	45.0	50.0	76.1	57.6	61.0	50.2	72.4	84.6	75.0	60.0
22	Վրաստան	**73.0**	40.0	49.0	87.2	73.8	88.6	79.9	82.7	88.6	80.0	60.0

Աղբյուրը՝ Հերիթիջ ֆաունդեյշընն. «Տնտեսական ազատության ինդեքսը» 2015թ.

Աղյուսակ 4

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2016թ., ՀՀ վարկանիշն այլ երկրների շարքում

Դիրքը	Երկիրը	Ամփոփ ցուցիչ	Տեղաշարժը 2015թ. համեմատ	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ													
54	Հայաստան	**67**	-0,1	20	37	83,8	80,7	77,5	62,2	72,8	85,6	80	70
68	Ղազախստան	**63,6**	0,3	30	29	93	87,7	72,3	82,7	74	77,4	40	50
91	Ադրբեջան	**60,2**	-0,8	20	29	88	56,7	70,3	75,2	77	75,8	60	50
96	Ղրղզստան	**59,6**	-1,7	20	27	93,7	56,3	65,3	80,4	68,4	75	60	50
117	Մոլդովա	**57,4**	-0,1	40	35	85,4	55,6	64,6	39,3	76	73,6	55	50
149	Տաջիկստան	**51,3**	-1,4	20	23	91,6	76,9	61,1	47,3	69,8	68,6	25	30
153	Ռուսաստան	**50,6**	-1,5	20	27	82,2	56,2	72,2	57,6	62,9	72,4	25	30
157	Բելառուս	**48,8**	-1	20	31	88,6	44,8	69	74,9	50,4	79	20	10
162	Ուկրաինա	**46,8**	-0,1	25	26	78,6	30,6	56,8	47,9	66,9	85,8	20	30
166	Ուզբեկստան	**46**	-1	15	18	90,4	66,6	67,1	61,9	65,6	65,6	0	10
174	Թուրքմենստան	**41,9**	0,5	5	17	95,3	92,2	30	20	69,4	80	0	10
Այլ երկրներ													
79	Թուրքիա	**62,1**	-1,1	40	45	75,2	55,6	65,4	48,6	71,5	84,4	75	60
23	Վրաստան	**72,6**	-0,4	40	52	87,6	75,3	86,5	75,7	80,5	88,6	80	60

Աղբյուրը՝ Հերիթիջ ֆաունդեյշընն. «Տնտեսական ազատության ինդեքսը» 2015թ.

Գրաֆիկ 1

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2012-2016թթ.,
Հարավային Կովկաս, դիրքային ցուցանիշներ



Գրաֆիկ 2

«Տնտեսական ազատության ինդեքսը» 2016թ.,
Հայաստանի վարկանշային ենթացուցիչները



Տնտեսություն

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Խաչիկ Փափազյան*

Արտաքին աուդիտի (կամ արտաքին պետական վերահսկողության) համակարգի բարելավումը և կատարելագործումը ցանկացած պետության հանրային ֆինանսների օգտագործման թափանցիկության և, ընդհանրապես, հանրային կառավարման արդյունավետության բարձրացման կարևորագույն երաշխիքներից է:

Եվրասիական տնտեսական միության ստեղծման գաղափարն ինքնին կոչված է ապահովելու միության անդամ երկրների առջև ծառացած այն համընդհանուր խնդիրների լուծման գործընթացը, որը յուրաքանչյուր երկրում կհանգեցնի կայուն տնտեսական առաջընթացի, ինչն իր հերթին հնարավորություն կընձեռի նաև յուրաքանչյուր երկրի զբաղեցնել ուրույն տեղ համաշխարհային տնտեսական համակարգում:

Վերոնշյալը հնարավոր է միմիայն հանրային միջոցների, ռեսուրսների, սեփականության արդյունավետ օգտագործման, կառավարման և վերահսկողության միջոցով: Սրա անհրաժեշտությունը ներկա պայմաններում կասկածից վեր է, իսկ արդեն կոնկրետ արդյունքային ցուցանիշների կայուն պարբերականությունն ապահովելու համար հարկավոր է հստակ հետևողականություն ցուցաբերել վերահսկողական աշխատանքներում, առանձնակի ուշադրություն դարձնելով բացասական երևույթների պատճառահետևանքային կապերի վերացմանը:

Գնահատելով Եվրասիական տնտեսական միության գործունեությունը՝ միության ուշադրության շրջանակներից դուրս չի մնացել այն կարևոր ոլորտ-

---

* ՀՀ Վերահսկիչ պալատի աշխատակազմի մեթոդաբանության և միջազգային կապերի վարչության գլխավոր մասնագետ, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի Հանրային կառավարման և հանրային ֆինանսների դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

ները, որոնց գործունեության գնահատականը հնարավոր է ստանալ արտաքին պետական վերահսկողության (աուդիտի) իրականացման միջոցով:

Միության անդամ երկրներում արտաքին աուդիտի իրականացումը վերապահված է բարձրագույն վերահսկողություն իրականացնող մարմիններին, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում՝ Վերահսկիչ պալատին, Ռուսաստանի Դաշնությունում՝ Հաշվիչ պալատին, Բելառուսի Հանրապետությունում՝ Պետական վերահսկողական հանձնաժողովին, Ղազախստանի Հանրապետությունում՝ Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող հաշվիչ հանձնաժողովին, Ղրղզստանում՝ Վերահսկիչ պալատին, որոնք գործում են՝ ելնելով իրենց ազգային օրենսդրության պահաջներից: Ընդ որում՝ այս երկրները, միևնույն ժամանակ, համարվում են ԱՊՀ անդամ երկրների բարձրագույն վերահսկիչ մարմինների ղեկավարների խորհրդի անդամներ:

Հարկ է ընդգծել, որ միության բյուջետային միջոցների ձևավորման, կառավարման, դրանց տնօրինման արդյունավետության, գույքի և այլ ակտիվների օգտագործման արդյունավետությունը պարզելու նպատակով միությունում նույնպես իրականացվում է արտաքին աուդիտ:

Միության աուդիտն իրականացնելու նպատակով անդամ պետությունների բարձրագույն վերահսկիչ մարմիններից ձևավորվում է աուդիտորների (տեսուչների) խումբ, որոնք իրենց գործունեությունը ծավալում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից հաստատված արտաքին աուդիտի հիմնադրույթի վրա հիմնվելով: Միության մարմիններում անցկացված արտաքին աուդիտի արդյունքները բարձրագույն վերահսկիչ մարմինների կողմից հաստատվելուց հետո ներկայացվում և քննարկվում են Բարձրագույն խորհրդում, դրանցով պայմանավորված ընդունվում են համապատասխան որոշումներ, ընդհուպ մինչև հայտնաբերված խախտումների, չարաշահումների, թերությունների, բացթողումների և ընդհանրապես՝ բացասական երևույթների վերացման, ինչպես նաև ներկայացված բազմաբնույթ ու բազմաբովանդակ առաջարկությունների (օրենսդրական, իրավական, տեխնիկական և այլն) ընդունման և իրագործման կապակցությամբ:

Աուդիտի արդյունքները հրապարակային են, և համապատասխան ընթացակարգերն անցնելուց հետո դրանք դառնում են հանրության սեփականությունը (լուսաբանվում են զանգվածային լրատվության տարբեր միջոցներով):

Արտաքին աուդիտի համար որպես օբյեկտ հանդիսանում են.

- միության տնտեսական հանձնաժողովը, վերջինիս մարմինները՝ Խորհուրդը և Կոլեգիան, դեպարտամենտները, ինչպես նաև Հանձնաժողովի կամ իր իսկ մարմինների կողմից ստեղծվող այլ մարմիններ,
- միության տնտեսական դատարանը, այդ թվում՝ դատարանի աշխատակազմը:

Միության շրջանակներում իրականացվող աուդիտի հիմքում ընկած են օրինականության, արդյունավետության, անաչառության, անկախության և հրապարակայնության սկզբունքները: Առաջնորդվելով աուդիտի հիմնարար սկզբունքներով՝ աուդիտի ձևերից իրականացվում են նախնական աուդիտը, ընթացիկ աուդիտը և հետահայաց աուդիտը: Իսկ աուդիտի տեսակներից կիրառական են ֆինանսական աուդիտը, համապատասխանության աուդիտը և կատարողականի աուդիտը:

Միության արտաքին աուդիտի իրականացման աշխատանքները համակարգում է անդամ պետություններից մեկը՝ այբբենական (ռուսերեն) պարբերական կրկնողության:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկավոր է նշել, որ արտաքին աուդիտի (վերահսկողության) իրավական կարգավորումը սահմանվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 78 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» հիմնադրույթով, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի թիվ 89 կարգադրությամբ հաստատված Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի Եվրասիական տնտեսական միության մարմիններում արտաքին աուդիտի (վերահսկողության) հիմնադրույթով, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումներով և կարգադրություններով, ինչպես նաև Միության իրավունքի մաս կազմող իրավական տարբեր այլ ակտերով: Իսկ ինչ վերաբերում է աուդիտի իրականացման գործընթացին, ապա վերջինս իրականացվում է Միության մարմիններում արտաքին աուդիտի (վերահսկողության)՝ վերոնշյալ հիմնադրույթով սահմանված կարգով մշակված և հաստատված ստանդարտներին համապատասխան:

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 27.05.2016թ.
Թիվ 3 (72), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում